ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

1. Զարգացման ծրագրի հիմքը _____էջ3
2. Զարգացման ծրագրի կազմման սկզբունքները_____ էջ4
3. Զարգացման ծրագրի կառուցվածքային սխեման_____ էջ5
4. Առաքելությունը_____ էջ6
5. Տվյալներ դպրոցի մասին_____ էջ7-9
6. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, հիմնախնդիրների սահմանում
   6.1. Նորմատիվ փաստաթղթերը_____ էջ10-12
   6.2. Հաստատության համագործակցությունը տեղականն ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքիկրթության կառավարման մարմինների հետէջ12- 13
   6.3. Կառավարման մարմիններ_____էջ13-19
   6.4. Աշակերտական համակազմը _____ էջ20-24
   6.5. Մանկավարժական համակազմը_____ էջ24-28
   6.6. Ուսումնական միջավայրը, դպրոցի տնտեսությունը և նյութատեխնիկական բազան_____ էջ28-40
   6.7. Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը _____ էջ 41-42
   6.8. Կրթության որակի վերլուծությունը_____ էջ 42-46
   6.9. Բյուջետային հնարավորություններ _____ էջ46-48
7. Նորամուծությունների ներդրումը դպրոցում_____էջ48-49
8. Հայրենասիրական դաստիարակություն_____ էջ49-50
9. Ծրագրի գործունեության ոլորտների նպատակներն ու խնդիրները_____ էջ51-55
10. Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման վտանգները և դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները_____ էջ56-58
11. Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները և վերահսկողությունը_ էջ58-60
12. Ակնկալվող արդյունքներ_____ էջ60-63

ՆԱԽԱԲԱՆ

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ:

Մեր պետությունը թևակոխել է զարգացման նոր փուլ, որտեղ խիստ կարևորում ենք կրթությունը, որպես պետության զարգացման և պետականաշինության հենասյուն:

Հանրակրթության դերն աճում է, միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակներ:

Կրթության բնագավառի, մասնավորաբար հանրակրթական դպրոցի գերխնդիրը շարունակում է մնալ կրթության որակի բարելավումը: Այդ գերխնդրի իրականացման համար դպրոցում պետք է նախադրյալներ ստեղծել և նախևառաջ ձերբազատվել նախկին, այսօր արդեն ոչ արդյունավետ գործունեությունից և դպրոցի զարգացումը ապահովել կառավարելի, թափանցիկ, գիտականորեն հիմնավորված նորովի մոտեցումներով:

Հանրակրթության էական բարեփոխումը և առաջանցիկ զարգացումը դառնում են անհրաժեշտ և անխուսափելի: Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը:

Գյումրու թիվ 30 հիմնական դպրոցի 2023-2028թթ Զարգացման ծրագիրը նախնական աշխատանքային փաստաթուղթ է՝ հիմնված ներկայիս վիճակի վերլուծության, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներկայացրած հանրակրթության առաջնահերթությունների, դպրոցի համակազմի և համայնքի կարիքների բացահայտման և ապագայի ցանկալի տեսլականին հասնելու քայլերի ակնկալվող արդյունքների ներկայացմամբ:

1.ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՔԸ

1. ՀՀ սահմանադրություն
2. <<Կրթության մասին>>ՀՀ օրենքը
3. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքը
4. ՀՀ << Աշխատանքային օրենսգիրքը>>
5. ՀՀ << Հանրակրթության պետական չափորոշիչ>>
6. Դպրոցի կանոնադրությունը
7. << Երեխաների իրավունքների մասին>> ՀՀ օրենքը
8. << Երեխաների իրավունքների մասին>> կոնվենցիան
9. << Լեզվի մասին>> ՀՀ օրենքը
10. << ՊՈԱԿ-ի մասին>> ՀՀ օրենքը
11. ՀՀ կրթության զարգացման պետական ծրագիրը
12. << Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի Ներքին գնահատման հաշվետվությունները

2.ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է, քանզի այն արտացոլում է յուրաքանչյուր հավակնորդի տվյալ դպրոցի հինգ տարվա տեսլականը: Դպրոցի զարգացման ծրագրի հիման վրա պլանավորվում է աշխատանքը դպրոցում: Զարգացման ծրագիրը մշակելիս առաջնորդվել եմ հետևյալ փոխկապակցված քայլերի հաջորդականությամբ:

Քայլ 1: Փորձել եմ պարզել տվյալ դպրոցի **առաքելությունը**, այսինքն՝ ներկայացնել դպրոցի այն տեսակի հեռապատկերը, որին ձգտում է հասնել տվյալ հաստատությունը:

Քայլ 2: Այնուհետև փորձել եմ վերլուծել **առկա իրավիճակը**, բացահայտել դպրոցի ուժեղ և թույլ կողմերը:

Քայլ 3: Գործունեության ոլորտների և նրանցում առկա հիմնախնդիրների վերլուծության արդյունքներում սահմանել եմ կոնկրետ **նպատակներ:**

Քայլ 4: Յուրաքանչյուր նպատակի համար սահմանել եմ այն **խնդիրները**, որոնց լուծման արդյունքում կարելի է հասնել այդ նպատակին:

Քայլ 5: Յուրաքանչյուր խնդրի համար ձևակերպել եմ համապատասխան գործողություններ, դրանց իրականացման **պատասխանատուներ, ժամկետներ**, **ակնկալվող արդյունքներ**:

Քայլ 6: Փորձել եմ հնարավորինս հստակ ներկայացնել զարգացման ծրագրի ֆինանսավորման մեխանիզմները:

Քայլ 7: Կանխատեսել եմ ծրագրի իրականացման **ռիսկերը,** նախատեսել դրանց ազդեցության նվազեցմանն ուղված գործողություններ:

Քայլ 8: Եվ ամենակարևորը՝ նախատեսել եմ ծրագրի **մշտադիտարկման**, **վերահսկողության** մեխանիզմներ, մշակել ցուցանիշներ, որոնց միջոցով կարելի է գնահատել ծրագրի իրականացման արդյունավետությունը:

Վերևում բերված գաղափարներն ընդհանրացված են հետևյալ կառուցվածքային սխեմայում:

3.ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԽԵՄԱՆ



4.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացման ծրագիրը մշակելիս առաջին հերթին անհրաժեշտ է ձևակերպել կամ հստակեցնել նրա առաքելությունը: Միայն դրանից հետո կարելի է որոշել հաստատության նպատակներն ու խնդիրները:

Դպրոցի առաքելությունը չի կարող ներկայացվել որպես բարի ցանկություն: Այն պահանջում է նախնական լուրջ հետազոտական աշխատանք: Անհրաժեշտ է մանրամասն վերլուծել և վեր հանել այն արտաքին և ներքին գործոնները, որոնք էական ազդեցություն ունեն առաքելության իրականացման վրա:

Արտաքին գործոնների թվին են պատկանում պետության կրթական քաղաքականության առանձնահատկությունները, պոտենցյալ շահառուների կրթական կարիքները, տեղական առանձնահատկությունները և այլն:

Ներքին գործոններից են դպրոցի ավանդույթները, մանկավարժական կոլեկտիվի փորձը, դպրոցի առկա ռեսուրսները և այլն:

Այդ իսկ պատճառով առաքելության ձևակերպման համար հաշվի եմ առել դպրոցի մանկավարժների, սովորողների և ծնողների կարծիքները, որոնք պատասխանել են հետևյալ հարցերին

- Ի՞նչ կրթական կարիքներ է այն բավարարելու
- Ի՞նչ նյութական ռեսուրսներ են առկա դրա համար
- Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ, որպեսզի իրականացվի, և որքանով է դա իրատեսական:

Կրթական հաստատության առաքելությունը, ըստ էության, արտահայտում է նրա փիլիսոփայությունը: Ես փորձել եմ ընդհանրական ձևով ներկայացնել դպրոցի այն տեսակը, որին ցանկանում եմ հասնել: Կփորձեմ դպրոցի առաքելությունը ներկայացնել հնարավորինս հակիրճ և ընդգրկուն, մի քանի նախադասությամբ:

1. **Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման, կրթության անհատականացման շնորհիվ որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների ձևավորում:**
2. **Յուրաքանչյուր սովորողի կարիքներին համահունչ անհրաժեշտ ուշադրության ապահովում:**
3. **Այնպիսի պայմանների ստեղծում, որտեղ յուրաքանչյուր սովորող որոշակի ոլորտում կարող է ինքնահաստատվել և դառնալ հաջողակ:**

4. Դպրոց բոլորի համար, դպրոց, որտեղ կարող են հաջողությամբ սովորել և՛ օժտված, և՛ սովորական երեխաները:
5. Օտար լեզուների խորացված ուսուցում, արտասահմանյան իր հասակակիցների հետ անմիջական շփումների միջոցով համաշխարհային մշակույթին ծանոթացում, հայրենասեր քաղաքացու ձևավորում:
6. Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի ձևավորում:

5.ՏՎՅԱԼՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

«Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Հեռ.՝ +374 0312 3-10-72

Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, 3303, ք. Գյումրի, Շչեդրին փ.7

Էլ. փոստ՝ Gyumri30@ schools mail.am

Աշխատողներ՝ 38

Կազմակերպա-իրավական տեսակը՝ ՊՈԱԿ

Իրավաբանական տեսակը՝ Ոչ առևտրային

Տնօրեն՝ Ժ/պ Մ. Եղոյան

Իրականացնում է հիմնական կրթություն, որը հանդիսանում է պարտադիր կրթության երկրորդ մակարդակը և ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և երկրորդ աստիճանները:

Դպրոցի ստեղծման տարեթիվը՝

1963թ, որպես ռուսաց լեզվի խորացված ուսուցմամբ հիմնական դպրոց

Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը՝ 2000թ.

Դպրոցի շենքի տիպը՝տիպային

Հարկայնությունը՝ 2 հարկանի

Ջեռուցման եղանակը՝ լոկալ ջեռուցման ցանց

Առանձնասենյակների թիվը՝ 3

Դասասենյակների թիվը՝ 4

Լաբորատորիա՝ 2

Առարկայական սենյակ /կաբինետ՝ 8

Նախնական զինպատրաստության՝ 1

Հրաձգարան՝ -

Համակարգչային կաբինետ՝ 1

Ինտերնետ կապի առկայությունը՝ առկա է

Բացօթյա սպորտհրապարակ՝ 1

Մարզադահլիճ՝ 1

Գրադարանի ֆոնդը՝ 290 կտոր գիրք

Աշխատողների թիվը՝ 38

Դասարանների թիվը՝ 9

Աշակերտների թիվը՝ 168

Հաստիքացուցակը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորների քանակը (դրույքը)
ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Տնօրեն	1. 0
Տնօրենի տեղակալ ուսումնական գծով	1. 0
Վարչատնտեսական մասի համակարգող	1. 0
Հաշվապահ	1. 0
Տնտեսվար	1. 0
Ընդամենը	5. 0
ՈՒՍՈՒՄՆԱ-ՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Զինղեկ	1. 0
Քաղպաշտպանություն	0. 25
Համակարգ. օպերատոր	1. 0
Գրադարանավար	1. 0

Դաստ . աշխ. կազմ.	1. 0
Հոգեբան	1. 0
Սոց. մանկավարժ	1. 0
Ուսուցչի օգնական	1. 5
Ընդամենը	7. 75
ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Հավաքարար	4. 0
Գործավար	1. 0
Հնոցապահ	3. 0
Խոհարար	0. 5
Ընդամենը	8,5

ՀՀ	Շինությունների և հարմարությունների անվանումը	Քանակը	Մակերեսը	Ծավալը $մ^2$
1	Շենք(եր)	1	1837,0	6062,1
2	Առանձնասենյակներ	3	66,3	248,8
3	Դասարաններ	4	128,0	422,0
4	Առարկայական լսարաններ	8	256,0	844,8
5	Լաբորատորիաներ	2	64,0	211,2
6	Արհեստանոցներ	1	32,0	105,6
7	Մարզադահլիճներ	1	342,0	2257,2
8	Գրադարան(ներ)	1	31,4	94,7
9	Բուժկետ	1	14,0	46,2
10	Ճաշարան	1	67,0	221,1
11	Հանդերձարան(ներ)	3	37,0	122,1
12	Զուգարան(ներ)	9	50,5	166,6
13	Տեխնիկական նշանակության այլ սենյակներ	3	11,6	38,3
14	Մարզահրապարակ(ներ)	1	1750,0	
15	Համակարգիչներ	8		
16	Համակարգչային այլ տեխնիկա	3		
17	Հեռախոսներ	1		
18	Ջեռուցվող տարածքներ		1786,0	

Դպրոցն աշխատում է 5-օրյա աշխատանքային ռեժիմով, միահերթ, ունի լոկալ ջեռուցում, ունեցել է հաստատված ուսումնադաստիարակչական աշխատանքային պլան, որի հիման վրա դպրոցի մյուս օղակները պլանավորել են իրենց աշխատանքները:

Դպրոցն ունի հաստատված կանոնադրություն, կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ: Ունի ինքնուրույն հաշվեկշիռ և գանձապետական հաշիվ, ինչպես նաև դպրոցական կայք և ֆեսբուքյան էջ:

6. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վեր հանել առկա հիմնախնդիրները:

Շատ հաճախ դժվար է լինում կողմնորոշվել դպրոցի ուժեղ և թույլ կողմերը որոշելիս: Իրավիճակի մասին պատկերացումները հստակեցնելու համար իրականացրել եմ իրավիճակի վերլուծություն:

Առավել օբյեկտիվ արդյունքի հասնելու համար համադրել եմ մի քանի մեթոդներ. իրականացրել եմ փաստաթղթերի վերլուծություն, դիտարկում, փոքր խմբերով քննարկում, հարցազրույց:

Իրավիճակի վերլուծությունը համակարգված իրականացնելու համար նպատակահարմար եմ գտել այն կատարել ըստ որոշակի ոլորտների: Այդպես առավելագույնս կընդգծվեն դպրոցի ուժեղ և թույլ կողմերը: Պետք է նաև հիշենք, որ մի դեպքում դպրոցը ունենում է հաջողություններ որևէ ուղղությամբ և դժվարություններ մեկ այլ ուղղությամբ, իսկ մյուս դեպքում հենց տվյալ ուղղությամբ դպրոցը ունենում է և՛ հաջո-ղություններ, և՛ դժվարություններ:

6.1 ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Այս բաժնի վերլուծությունը կատարելիս ուսումնասիրվել է ոչ միայն համապատասխան ներքին փաստաթղթերի առկայությունը, կատարել եմ նաև դիտարկում-փաստագրում ըստ յուրաքանչյուր չափանիշի: Միևնույն ժամանակ այս ոլորտում և մյուս ոլորտներում օբյեկտիվ վերլուծության համար, իրականացրել եմ հարցումներ ծնողների, սովորողների և ուսուցիչների շրջանում՝ համապատասխան հարցաթերթիկներով: Հարցման արդյունքները ուսումնասիրվել և վերլուծվել են: Հարցվողների ամեն խմբի համար կազմվել է մեկ հարցաթերթ, որում տեղ են գտել հարցման ենթակա խնդիրները/ հարցաթերթերը կցվում են/: Հարցումներին մասնակցել են 20 սովորող, 20 ծնող և 10 ուսուցիչ և դպրոցի վարչական կազմը:

- Ուսումնական հաստատությունը պետք է ունենա նորմատիվ և իրավական համակարգի զարգացման հնարավորություն, իր գործունեության համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերի ցանկը և ցանկում նշված բոլոր փաստաթղթերը: Ցանկում նշված փաստաթղթերի օրինակելի տարբերակների հիման վրա պետք է կազմված և սահմանված կարգով հաստատված լինեն իր կառուցվածքին հատուկ փաստաթղթերը:
- Ուսումնական հաստատությունում պետք է առկա լինեն պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը, և դրանք պետք է վարվեն կարգերի պահանջներին համապատասխան: Ուսումնական հաստատությունը պետք է արդյունավետ օգտագործի գոյություն ունեցող նորմատիվ փաստաթղթերը, դրանց օրինակելի ձևերը, իր իրավասության սահմաններում մշակի հաստատության համար անհրաժեշտ նոր նորմատիվ փաստաթղթեր (ներքին իրավական ակտեր) և դրանք կիրառի աշխատանքի ընթացքում: Այս աշխատանքին մասնակցելու հնարավորություն պետք է ունենան հաստատության բոլոր աշխատակիցները: Այդ փաստաթղթերը պետք է լինեն արդյունավետ, ժամանակակից, իրականանալի (իրականացնելի), ապահովեն աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների աճ:
- ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը: Այդ փաստաթղթերը լրացնելը

դպրոցի առօրյա գործունեության կանոնակարգման համար դեռևս բավարար չէ: Պետք է ունենալ նաև խորհրդակցական մարմնի կանոնադրությունը, որտեղ նկարագրվում են նաև փաստաթղթի վարման գործընթացը և պատասխանատուների աշխատանքը: Օրինակ՝ մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանը վարելու համար դպրոցը մանկավարժական խորհրդի օրինակելի կանոնադրության հիման վրա պետք է մշակի իր կանոնադրությունը և դրա մեջ սահմանված կարգով վարի մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանը:

- Ուսումնական հաստատությունում առկա են պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը, և դրանք վարում են կարգերի պահանջներին համապատասխան: Սակայն անհրաժեշտություն կա ապահովելու ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերի համապատասխանությունը դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին, ինչպես նաև զարգացնել դպրոցի տնօրենի և նրա տեղակալների կարողությունները՝ օրինակելի փաստաթղթերի հիման վրա դպրոցական փաստաթղթեր ստեղծելու համար:

- Ուստի ***նպատակ*** եմ սահմանում ապահովել ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերի համապատասխանությունը դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին:

6.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման և սովորողներին ու մանկավարժներին հասարակական կյանքին ակտիվորեն ներգրավելու համար անհրաժեշտ է մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ:

ՈՒսումնական հաստատությունը համագործակցում է ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության, Շիրակի մարզպետարանի, Գյումրու համայնքապետարանի , ԿԶՆԱԿ-ի,

ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, ՊՆ-ի, Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի,Գյումրու քաղաքային գրադարանի, ՌԴ հյուպատոսության, իրավապահ մարմինների, «Ինտերակտիվ» կրթության զարգացման հիմնադրամի, տարածաշրջանի այլ դպրոցների ու մանկապարտեզների հետ:

Դպրոցը համագործակցում է Շիրակի ՏՄԱԿ-ի, «Հույսի կամուրջ»,«Կարիտաս», «Նոր լույս» Հ/Կ-ների հետ: Դպրոցի ռեսուրս-սենյակը և հարակից սանհանգույցը վերանորոգվել և կահավորվել են ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և ԱՄՆ Միջազգային զարգացման գարծակալության համագործակցությամբ իրականացվող «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

Դպրոցը շատ ակտիվ համագործակցում է թատրոնների, թանգարանների և այլ մշակութային կենտրոնների հետ:

Համայնքային հիմախնդիրների վերաբերյալ հաստատության աշխատակազմը տեղեկացված է և մասնակցում է այդ աշխատանքներին:

Կազմակերպվում են բնապահպանական աշխատանքներ, ծառատունկ, տարածքի մաքրում, աղբի զանազանում, շաբաթօրյակներ:

ՈՒսումնական հաստատության կողմից թաղի բնակիչների համար ծնողական համայնքի հետ մեկտեղ հաճախ կազմակերպվել ու անցկացվել են հետաքրքիր միջոցառումներ՝ Հուլիսի 1, Գիտելիքի և դպրության օր, Նոր տարի, տարբեր սպորտլանդիաներ:

Կարիք կա

- առավել ակտիվ համագործակցության ծնողական համայնքի, կրթության ոլորտով հետաքրքրվողների հետ,
- համագործակցություն այլ մարզերի և արտերկրի դպրոցների հետ,
- սովողների մեջ ձևավորելու քաղաքացիական հասարակության ակտիվ քաղաքացի:

6.3 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ անտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 77-րդ կետով ամրագրված է.

<<Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ>>:

Բոլոր խորհրդակցական մարմինները ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը: Շատ կարևոր է, որ խորհուրդներն ունենան ***իրական ինքնավարություն***, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները: Այն դեպքում, երբ խորհրդակցական մարմինները գործում են ձևական, չեն կատարում կամ մասամբ են կատարում իրենց պարտականությունները, դպրոցում ուսումնադաստիարակչական, կառավարման և ղեկավարման գործընթացներն էականորեն տուժում են: Դպրոցը դառնում է փակ, դպրոցում իրականացվող գործընթացները ուսուցիչների, աշակերտների և համայնքի համար դառնում են անհասկանալի և հետևաբար նրանց և դպրոցի միջև առաջանում է անվստահության մթնոլորտ:

Դպրոցի տնօրենը պետք է կարողանա գնահատել և ժամանակին միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու, ձևական գործընթացները դադարեցնելու համար:

Աշակերտական խորհուրդը ձևավորված է կարգին համապատասխան, ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները և օժանդակում դրանց իրագործմանը:

Հարցաթերթիկներով վերլուծության արդյունքում պարզվեց, որ ոչ բոլորն են ճանաչում աշակերտական խորհրդի անդամներին;

Զարմանալի էր, քանզի աշակերտական ընդհանուր ժողովը (համաժողովը) դպրոցի սեպտեմբերյան ժողովում ձևավորում է խորհրդակցական մարմին՝ աշակերտական խորհուրդ:

Աշակերտական ինքնավարության մարմինների (ընդհանուր ժողովի), դասարանական ժողովի, գործադիր մարմնի՝ աշակերտական խորհրդի, ինչպես նաև նրա ղեկավարության ձևավորման կարգը, լիազորությունները սահմանվում են դպրոցի կանոնադրությամբ և նախարարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության հանրակրթական հաստատության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությամբ: Այստեղից եզրակացություն, որ դպրոցում պետք է իրականացնել աշակերտական խորհրդի իրական ընտրություններ, այդ ընտրությունները տոն դարձնել դպրոցի համար : Առաջարկել, հնարավորություն տալ, օգնել ցանկացողներին աշխորհրդի նախագահի թեկնածության համար ծրագրիր ներկայացնելուն : Ստեղծել հաշվիչ հանձնաժողով, քննարկել քվեարկության կարգը : Արդյունքում կունենաք արդար ընտրված աշխորհրդի նախագահ :

Աշակերտական խորհուրդը՝ ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան, անմիջականորեն աշակերտներին վերաբերող հարցերի մասին ազատորեն կարծիք կարող է ներկայացնել հանրակրթական դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններին, որը հաճախ չի անում :

Աշակերտական խորհրդի ներկայացուցիչը, խորհրդակցական ձայնի իրավունքով, կարող է մասնակցել դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի այն նիստերին /կամ հարցերի քննարկմանը/, որտեղ քննարկվում են աշակերտներին անմիջականորեն վերաբերող հարցեր :

Նման գործողությունները կնպաստեն, կօժանդակեն

- հաստատությունում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը.
- սովորողների ինքնադրսևորմանը, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը.
- երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական, ժողովրդավարական պետության կառուցմանը:

Կառավարման խորհուրդ

Կառավարման խորհրդի կազմը՝

1. Սեդա Կարապետյան- ՀՀ ԿԳՄՍ
2. Անժելա Մաթոսյան-լիազոր մարմին
3. Շավարշ Արամյան-լիազոր մարմին
4. Սուրեն Ավետիսյան-լիազոր մարմին
5. Աշխեն Բաղալյան-քաղաքապետարան
6. Հերմինե Վարդան-մանկավարժական խորհուրդ
7. Լիլիթ Հունոյան- մանկավարժական խորհուրդ
8. Աննա Մանուկյան- ծնողական խորհուրդ
9. Քրիստինե Մնացականյան-ծնողական խորհուրդ

Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է: Ինչպես գիտենք՝ որոշ դեպքերում կամ շատ դեպքերում կառավարման խորհուրդներն իրենց չեն արդարացնում :

Կառավարման խորհուրդը հավանություն է տալիս դպրոցի զարգացման ծրագրին, սակայն շատ հաճախ չի վերահսկում զարգացման ծրագրի կատարողականը, ֆինանսական հաշվետվությունները, այդ ամենը կատարվում է ձևականորեն, որի արդյունքում անբարեխիղճ տնօրենի պատճառով դպրոցը շատ հաճախ ունենում է ֆինանսական լուրջ խնդիրներ: Կառավարման խորհրդի շատ անդամներ նույնիսկ չգիտեն իրենց գործառույթները :

Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները՝ հետևյալ ուղղություններով.

- նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում,
- դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

- դպրոցական շինարարության վերաբերյալ պետական լիազորված մարմիններին առաջարկությունների ներկայացում:

Մանկավարժական խորհուրդը բաղկացած է 19 անդամից: Ըստ գործող կարգի հավանություն է տվել տարեկան աշխատանքային պլանին, ուսումնական պլանին, դասաբաշխմանը:

Շատ հաճախ մանկավարժական խորհուրդը պարզապես հաստատում է տնօրենի առաջարկած նախագիծը՝ երբեմն դրան համաձայն չլինելով հանդերձ: Դա համարում են անիմաստ միջամտություն, որովհետև նրանց կարծիքով դպրոցի տնօրենը, միևնույն է, իր առաջարկությունն է պնդելու: Այստեղ խնդիրը դպրոցի տնօրենի կողմից օրենսդրական պահանջները չներկայացնելն է:

Ուսուցիչների աշխատանքների գնահատման և խրախուսման նոր գործիքներ չեն կիրառվել:

Կարիք կա

- մանկավարժական խորհրդի անդամների համար սեմինարներ կազմակերպելու՝ նրանց դպրոցի հիմնարար փաստաթղթերին ծանոթացնելու համար:
- առաջավոր փորձի հիման վրա դպրոցի աշխատանքների ակտիվացման
- սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի առավել արդյունավետ աշխատակարգի մշակման և կիրառման ներդրման

Դպրոցում ձևավորված առարկայական մասնախմբերը երեքն են՝տարրական, պատմաբանասիրական, բնագիտամաթեմատիկական :

Առարկայական մասնախմբերի գործունեության մեջ հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ նախագահը շատ հաճախ ինչպես կարգն է չի կազմակերպում նիստեր,քանզի շատ դպրոցներում չի էլ վարձատրվում, իսկ ուսուցիչները առանձնակի հետևողականություն չեն ցուցաբերում այդ հարցում, քանի որ դա լրացուցիչ աշխատանք է, իսկ նրանք այնքան էլ ոգևորված չեն այդ աշխատանքով: Հաճախ ուսուցիչները տեղյակ չեն, որ համաձայն

կանոնադրության՝ ամիսը մեկ անգամ անհրաժեշտ է հրավիրել առակայական մասնախմբերի նիստ:

Առարկայական մասնախմբերը չեն համագործակցում հարևան դպրոցների մ/մների հետ: Կարիք կա

1.առարկայական մեթոդական միավորումների նախագահների համար սեմինարներ կազմակերպելու «Առարկայական մեթոդական միավորման աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը» թեմայով:

՝2.առարկայական մեթոդական միավորումների մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը գործող փորձի ուսումնասիրության միջոցով զարգացնելու:

Դպրոցի ծնողական խորհուրդը ձևավորված է կարգի պահանջներին համապատասխան:

Ծնողական խորհուրդը պարբերաբար լսել է տնօրենի հաշվետվությունը դպրոցի հեռանկարային պլանների մասին : Դպրոցի ծնողխորհուրդը իր նախաձեռնություններով ակտիվորեն աջակցում և օգնում է դպրոցի զարգացման տարեկան ծրագրի իրականացմանը: Պատահականության սկզբունքով ընտրված և հարցված 20 ծնողներից 14-ը պատասխանել էին, որ ակտիվ մասնակցում են դպրոցական կյանքին, իսկ 20-ից 10-ը առաջարկություններ են ներկայացրել տնօրինությանը, որը բավականին լավ ցուցանիշ է :

Ծնողխորհուրդը երբևէ չի պահանջել խրախուսանքի ներկայացնել լավագույն աշակերտներին և ուսուցիչներին: Միաժամանակ կարող է պահանջել կարգապահական տույժի կիրառում այն ուսուցիչների և սովորողների նկատմամբ, որոնք թերանում են իրենց պարտականությունների կատարման գործում:

ՈՒսումնական հաստատության ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է մանկավարժական և վարչական անձնակազմի հետ, նպաստում սաների կրթադաստիարակչական աշխատանքներին:

Սովորողների կրթադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացվել է 2 առաջարկություն:

Ծնողական խորհրդի կողմից ուստարվա ընթացքում կազմակերպվել են միջոցառումներ:

Ծնողական խորհրդի հանդիպումներն իրականացել են գործող կարգին համապատասխան:

Բավականին շատ է այն ծնողների թիվը, որոնք օգտվում են նախարարության, համայնքի, հաստատության և կրթական այլ կայքերից:

Կարիք կա

- ծնողների ու մանկավարժական հանրույթի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորման,
- ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդման համար սեմինարներ, հանդիպումներ կազմակերպելու
- սովորողների արտադպրոցական և արտադասարանական, ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման աշխատանքներում ծնողների առավել ակտիվ մասնակցության,

Դպրոցը չունի ***հոգաբարձուների խորհուրդ:*** Դպրոցի հոգաբարձուների խորհրդի լիազորությունների շրջանակում են.

1. օժանդակել հանրակրթական դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը,
2. նպաստել հանրակրթական դպրոցի կողմից իրականացվող լրացուցիչ, ինչպես նաև օրենքին և հանրակրթական դպրոցի կանոնադրությանը չհակասող այլ ծրագրերի իրականացմանը,
3. աջակցել սոցիալական ծրագրերի իրականացմանն ու սովորողների ամառային հանգստի կազմակերպմանը,

Կարիք կա դպրոցում հոգաբարձուների խորհրդի ձևավորման: Առաջիկա 5 տարիների ընթացքում անհրաժեշտ է ձևավորել հոգաբարձուների խորհուրդ: Դրա կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների, անհատ բարերարների, դպրոցի շրջանավարտների և կամավորների:

Իմ զարգացման ծրագրում հատուկ անդրադարձել եմ նշված հիմնախնդիրներին, որոնցից էլ կբխեն իմ նպատակներն ու սպասված արդյունքին հասնելու համար նախատեսված գործողությունները:

6.4 ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Պետական դպրոցի տնօրենը պարտավոր է տվյալ տարածքում բնակվող երեխաներին (սովորողներին) ծնողի կողմից դիմում ներկայացնելու դեպքում ընդունել դպրոց՝ ապահովելով օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան պայմաններ:

Հատուկ եմ ընդգծել՝ ապահովելով օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան պայմաններ բառակապակցությունը, քանզի այո, ընդունում ենք բոլոր ցանկացողներին, բայց արդյոք ապահովում ենք նրանց համար բոլոր պայմանները; Սա շատ լուրջ խնդիր է դպրոցի համար:

Դպրոց ընդունելության ժամանակ սովորողի գիտելիքների ստուգում չի թույլատրվում: Աշակերտների ընդունելությունը կատարելուց հետո կոմպլեկտավորում են դասարաններ, որտեղ սովորողները տարբերվում են ըստ կրթական կարիքների, ընդունակությունների, կրթության նկատմամբ ունեցած վերաբերմունքի և կրթական պահանջների: Դպրոցը պետք է դասարանի աշակերտական կոլեկտիվի նկարագիրը լավ պատկերացնի՝ նրանց ուսումնական պլանը ճիշտ կազմելու, առարկայական ծրագիրը և դրա հիման վրա թեմատիկ պլանավորումը ճիշտ կատարելու համար:

Ցուցանիշը	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	195	195	170	167
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ	194	197	170	168
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	-	2	-	1
Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը	1	-	-	-



Վերլուծության արդյունքում երևում է, որ այս ուսումնական տարում կտրուկ նվազել է աշակերտների թիվը: Դպրոցից հեռացողների հիմնական պատճառաբանությունը եղել է համապատասխան պայմանների բացակայությունը:

Վերլուծությունից պարզ է դառնում, որ համապատասխան պայմանների առկայության դեպքում բավականին շատ աշակերտների ներհոսք կգրանցվի:/ Այս մասին առավել մանրամասն կխոսեմ <<ՈՒսումնական միջավայր>> ոլորտը քննարկելիս/;

Աշակերտները ոչ մի այն մտավոր, այլև սոցիալական և հուզական (էմոցիոնալ) անհատականություններ են, և այս ամենն ազդում է նրանց սովորելու արդյունավետության վրա: Որպեսզի հասկանանք, թե ովքեր են մեր աշակերտները, պետք է հաշվի առնենք նրանց

- նախնական գիտելիքները
- մտավոր զարգացումը
- մշակութային դաստիարակությունը
- զարգացվածությունը և զարգանալու հույսերը(սպասելիքները)

<u>Նախնական գիտելիքներ</u>

Աշակերտները եկել են կրթություն ստանալու՝ ունենալով նախնական գիտելիքներ, ունակություններ, պատկերացումներ և կարծիքներ, որոնք զգալիորեն ձևավորվել են

միջավայրի ազդեցությամբ: Սա ազդում է նրանց՝ դժվարությունները հաղթահարելու և նոր գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների վրա: Նոր գիտելիքները կառուցվում են առկա գիտելիքների հիման վրա: Դպրոցը նախ պետք է իմանա, թե ինչ գիտեն աշակերտները մինչև նրանց ուսուցումը կազմակերպելը, որպեսզի օգնի, որ նրանք կարողանան զարգացնել իրենց գիտելիքները և կարողանան դրանք արդյունավետ կիրառել:Այս հարցում շատ կարևոր է ճիշտ ուսուցման մեթոդի ընտրությունը:/օրինակ՝ անհատական ուսուցում/

Մտավոր զարգացում

Մտավոր զարգացման առաջին փուլում (դուալիզմ) աշակերտներն աշխարհին նայում են լավ-վատ, սև-սպիտակ տեսանկյունից, և կրթությունը նրանց համար պարզապես տեղեկատվության փոխանակում է: Նրանք հավատում են, որ ուսուցչի գործն է տալ, իսկ իրենց գործն է հիշել և վերարտադրել այդ տեղեկությունները:Մտավոր զարգացման հաջորդ փուլում (բազմազանություն) աշակերտները հասկանում են, որ մասնագետները կարող են նույն բանի մասին տարբեր կարծիքներ ունենալ, և փաստերը կարող են մեկը մյուսին հակասել: Զարգացման այս փուլում աշակերտի համար ամեն ինչ հիմնվում է կարծիքի և տեսակետի վրա: Բայց նրանք դժվարանում են գնահատել բոլոր կարծիքները և բերել փաստարկներ՝ պաշտպանելու համար իրենցը: Այս փուլում աշակերտները սկսում են ուսուցչի գնահատումը համարել սուբյեկտիվ:

Մտավոր զարգացման հաջորդ փուլում (ռելյատիվիզմ) աշակերտները հասկանում են սեփական կարծիքը պաշտպանելու համար ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունը: Ինչպես դուալիստական փուլում, նրանք ունեն իրենց կարծիքը, բայց արդեն հասկանում են, որ դրանք պետք է հիմնված լինեն հետազոտության և վերլուծության վրա: Ուսուցիչը նրանց համար արդեն գիտակ ուղեկցող է, քննարկումների մասնակից, միևնույն ժամանակ ուսուցչի կարծիքը չի դիտարկվում որպես առկա կարծիքներից մեկը պարզապես:

Զարգացման հաջորդ փուլում (պարտավորություն) աշակերտները ընտրություն են կատարում և որոշում են կայացնում՝ արտաքին աշխարհում իրենց ունեցած մտավոր զարգացման մակարդակին համապատասխան:

Մշակութային դաստիարակությունը: Չնայած բոլորը հասկանում են սովորելու անհրաժեշտությունը, ամեն մարդ ինքն է որոշում՝ ինչ է սովորելու, ինչպես է սովորելու ու ինչպես է տեսնելու աշակերտի և ուսուցչի դերը սովորելու գործընթացում:Երբ տարբեր մշակույթով դաստիարակված աշակերտներ սովորում են նույն դասարանում կամ դպրոցում, պետք է հասկանալ, թե այդ տարբերությունը ինչքանով կարող է փսասել սովորելու առաջընթացին:Անհրաժեշտ է՝ ճանաչել մարտահրավերների տեսակները, ուսումնասիրել այն պատճառները, որոնք կարող են խոչընդոտել սովորեցնելու և սովորելու գործընթացին:

Զարգացվածությունը և զարգանալու հույսերը

Սերունդներն ունեն իրենց սեփական մշակույթը, որը ձևավորվում է տարբեր սոցիալական և համաշխարհային գործընթացներով:Սերունդների միջև եղած տարբերությունն ազդում է աշակերտների սովորույթների և սպասելիքների վրա. երբ նրանք գալիս են դպրոց, ինչպե՞ս են սկսում սովորել և ինչպե՞ս են պատկերացնում աշակերտի և ուսուցչի դերերը: Աշակերտները, ում մենք հիմա դասավանդում ենք, ունեն իրենց առանձնահատկությունները, որոնք դասարանում ազդում են ուսուցման գործընթացի վրա, որը և ունենում է դրական կամ բացասական հետևանքներ:Հաճախ ուսուցիչը, հաշվի չառնելով աշակերտի նախնական գիտելիքները, փորձում է նրանց սովորեցնել նոր նյութը: Դա, իհարկե, չի ստացվում, և աշակերտների մոտ առաջընթաց չի նկատվում: Սա բերում է աշակերտների ինքնագնահատման անկման և հուսահատության: Մինչդեռ, երբ ուսուցիչը հաշվի է առնում աշակերտների նախնական գիտելիքները, վերանայում է թեմատիկ պլանավորումը, դասն այլ կերպ է պլանավորում, այլ նպատակներ է ընտրում տվյալ դասի համար և սկսում է զարգացնել աշակերտների գիտելիքները՝ լրացնելով նախկինում չյուրացվածը: Հակառակ դեպքում ետ մնացող աշակերտները սահմանափակում են ուսուցիչների հնարավորությունները՝ զարգացնելու դասարանի մյուս աշակերտների ուսումնական հաջողությունները, և դասարանը սկսում է փոխել իր առաջադիմությունը: Կան ուսուցիչներ, որոնք հաշվի չառնելով աշակերտի՝ ուսուցման նկատմամբ ունեցած վերաբերմունքը, ընդունակությունները, տարիքային և սոցիալական առանձնահատկությունները, նրանց հետ ուսուցումը կազմակերպում են միևնույն ձևով: Դա աշակերտների մեջ առաջացնում է անհամաձայնություն, դժգոհություն և վերջում նաև ընդվզում: Նշված հիմնախնդիրներն իրենց

արտացոլումն են գտել դպրոցի զարգացման ծրագրում՝ հիմք դառնալով դպրոցի նպատակների սահմանման համար:

Այս խնդիրների լուծման համար կարևորում եմ ներքոգրյալ նպատակները

- Զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները շերտավոր ուսուցման ուղղությամբ:
- Զարգացնել դպրոցի ուսուցիչների կարողությունները սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու, նրանց հետ արդյունավետ աշխատելու համար:
- Զարգացնել դպրոցի հոգեբանական ծառայությունը, սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, նրանց օգնելու և դասարանում առաջացող խնդիրների լուծմանն աջակցելու համար:

6.5 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ

Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Մենք պետք է կարողանանք գնահատել մեր մանկավարժական պոտենցիալը, ինչի համար պետք է ունենանք գնահատման չափանիշներ: Մենք կարող ենք ուսուցչին գնահատել՝ ըստ նրա կրթության և փորձառության, ըստ նրա՝ ուսուցման գործընթացում ունեցած հաջողությունների, ըստ դպրոցի զարգացման գործընթացում նրա ունեցած ներդրման: Չափանիշներ կարող են լինել օրինակ՝

1. Ունի բարձրագույն մասնագիտական կրթություն:
2. Ունի աշխատանքի 5 և ավելի տարվա փորձ:
3. Ուսուցման գործընթացում կիրառում է դասավանդման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ստանալու բավարար գիտելիքներ, ձեռք բերելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:
4. Գիտի գնահատման մեթոդաբանությունը և կարողանում է այն կիրառել:
5. Գիտի առարկայի չափորոշիչները և դասավանդելիս առաջնորդվում է չափորոշիչներով:
6. Իր աշխատանքում պատասխանատու է և պարտաճանաչ, նպաստում է դպրոցի ուսումնական և վարչական աշխատանքների կազմակերպմանը, ուսումնասիրում է գոյություն ունեցող փորձը և տարածում է իրենը:

7. Գիտի տարիքային հոգեբանությունը:
8. Գիտի և հարգում է երեխաների իրավունքները:
9. Պահպանում է մանկավարժական էթիկայի կանոնները:

Կրթության որակի բարելավումը նախ և առաջ ենթադրում է որակյալ ուսուցիչների առկայություն: Կրթության որակի բարձացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է հենց իրեն՝ ուսուցչին ու զարմանալի է, որ դպրոցում ոչ մի ուսուցիչ չունի տարակարգ ու չի էլ ձգտում դրան՝պատճառաբանելով դրա անիմաստ լինելը: Միգուցե վերապատրաստման և ատեստավորման համակարգը իրենց չի բավարարում, բայց չէ որ սա մի միջոց է ինքնակրթվելու և աշխատավարձը բարձրացնելու, որի քչությունից միշտ ենք դժգոհում; Ներդրվել է նոր ծրագիրը, որը ենթադրում է ատեստավորման նոր համակարգ՝հիմնված վերջնարդյունքի վրա, որը հնարավորություն է տալիս նաև ուսուցիչների աշխատավարձի բարձրացման: Սկզբում կամավորության սկզբունքով՝ովքեր կհաղթահարեն այդ չափանիշները՝50 %-ով ավել աշխատավարձ կստանան: Խնդիրը կայանում է նրանում, որ երբ ուսումնասիրում ենք վերջին տարիների ատեստավորման համակարգը, մենք չունենք մի որևէ դեպք, երբ ատեստավորման հիմքով որևէ ուսուցիչ ազատված լինի զբաղեցրած պաշտոնից կամ ունենանք մի եզրակացություն, որ ուսուցիչը չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին; Այս նոր ծրագիրը հնարավորություն տվեց ձերբազատվելու այն ուսուցիչներից, որոնց տեղը դպրոցը չէ;

Դպրոցի ուսուցչական համակազմից կամավոր ատեստավորման մասնակցել է մեկ ուսուցիչ, որը հաղթահարել է 40%-ի շեմը:

Գիտական կոչում ունեցող, միջազգային ու տեղական պարբերականներում (ամսագրերում) հրապարակված հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ ունեցող ուսուցիչներ չկան դպրոցում:

Մանկավարժական աշխատողներից շատերը տիրապետում են ուսուցման ժամանակակից (երեխայակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ և այլ) մեթոդներին և գործնականում կիրառում են դրանք:

Բոլոր մանկավարժական աշխատողները վերջին 5 տարում պարտադիր են վերապատրաստում են անցել նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում:

Մանկավարժական աշխատողները համակարգիչները էլեկտրոնային գրատախտակի բացակայության պատճառով ուսումնական գործընթացում հիմնականում չեն կիրառում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ:

Մանկավարժական աշխատողների բացակայությունները ուստարվա ընթացքում շատ քիչ էին և ներկայացված էին անաշխատունակության թերթիկներ: Կարգին համապատասխան փոխարինումն իրականացված էր:

ՈՒսումնական տարվա ընթացքում հաստատությունում անցկացվող ցուցադրական բաց պարապմունքներ անցկացված էին ըստ մասնախմբերի աշխատանքային պլանի:

ՈՒսուցիչների տարիքային բաշխվածությունը.

	25-29	30-39	40-49	50-59	60 և ավելի	ընդամենը
2018-2019	-	1	2	2	8	13
2019-2020	2	4	1	2	6	15
2020-2021	3	4	2	4	5	18
2021-2022	2	4	1	3	7	17
2022-2023	-	6	2	2	8	18



Դպրոցի մանկավարժական համակազմի **որակական** բարելավումը համարում եմ դպրոցի ***ռազմավարություններից*** մեկը: Այն ենթադրում է հետևյալը՝

Ա. Ուսումնասիրել, ընդհանարացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում:

Բ. Որակավորման տարակարգ չունեցող, սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման:

Գ. Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ:

Դ. Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերցումներ:

Ե. Նպաստել ուսուցիչների որակավորման բարձացմանը:

Զ. Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ձեռք բերել ոչ միայն նոր համակարգիչներ, այլև էլեկտրոնային գրատախտակ, Հասնել նրան, որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին և կարողանա օգտվել համացանցից: Այդ նպատակով կազմակերպել դասընթացներ:

Է. Կատարելագործել ուսուցիչների աշխատանքը կրթական կայքերի միջոցով (armedu.am, edu.am, aniedu.am, dasaran.am և այլն):

6. 6 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ, ԴՊՐՈՑԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

- Ուսումնական հաստատության շենքը կարիք ունի վերանորոգման(իմ՝դպրոց այցելության պահին՝21.06.2023թ.ընթանում էին վերանորոգման աշխատանքներ):
- Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար:
- Ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից,
- Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:
- Ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավոր հավաքվում են հատուկ աղբարկղներում և դուրս են բերվում հաստատության տարածքից:
- Ուսումնական հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ:
- Ուսումնական հաստատության շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր:
- Ուսումնական հաստատության շենքը հարմարեցված չէ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեք հարթակներ, լայն դռներ և այլն):
- Ուսումնական հաստատությում գործում ե լոկալ ջեռուցում և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:
- Ուսումնական հաստատության միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:
- Ուսումնական հաստատությունն ապահովված է հոսող խմելու ջրով:
- Ուսումնական հաստատության առաջին հարկում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ՝ տղաների և աղջիկների համար:
- Ուսումնական հաստատությունում առկա է սննդի կետ, որը համապատասխանում է սանտարահիգիենիկ պայմաններին:
- Ուսումնական հաստատության սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ:

- Ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն:
- Դպրոցում նախակրթարան չի գործում:

Հաստատությունում ստեղծված է որակյալ կրթական միջավայր:

<u>Հաստատության նախագծային հզորությունը նկարագրող ցուցանիշներ և չափանիշներ</u>

Կրթական ծրագրերի իրականացումը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ է: Այսինքն դպրոցներն այդպիսի ծրագրեր իրականացնելու նամար պետք ունենան համապատասխան լիցեզիա, ընդ որում՝ առկա յուրաքանչյուր ծրագրի համար: Այսինքն՝ թե տարրական, թե հիմնական և թե միջնակարգ կրթություն տրամադրելու համար անհրաժեշտ է ստանալ առանձին լիցենզիա:

Դպրոցն ունի համապատասխան լիցեզիաներ-տարրական ՍերիաԱN 0562

հիմնական ՍերիաԱN 0551

ՈՒսումնասիրելով ուսումնադաստիարակչական աշխատանքների, միջոցառումների, բաց դասերի պլանները, ծնողական ժողովների օրակարգերը՝ եկա այն եզրահանգման, որ ուսումական հաստատությունն իրականացնում է սովորողների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությանը միտված ուսումադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ.

ա. ուսումական հաստատության մանկավարժական աշխատողների կողմից իրականացվում են սաների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, կանխարգելման և հանրային քննարկման աշխատանքներ,

բ. ուսումական հաստատությունն անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների միջոցով իրականացնում է երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ,

գ. ուսումական հաստատությունը կազմում է ուսումամեթոդական նյութեր և կազմակերպում է իրազեկման միջոցառումներ՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ

հոգեբանական ճնշման դեմ:

Տվյալներ հաստատության ջեռուցման առկայության և տեսակի վերաբերյալ

Հաստատությունն ապահովված է անվտանգ լոկալ ջեռուցման համակարգով: Բոլոր դասասենյակներում, ինչպես նաև միջանցքներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, որոնք համապատասխանում են սանիտարական նորմերին: Ջեռուցման ամիսներին դիտարկման արդյունքները եղել են բավարար:

Տվյալներ հաստատությունում բուժկետի առկայության և բուժսպասարկման վիճակի վերաբերյալ

Հաստատությունում առկա է բուժկետ (ընդգծել այո կամ ոչ բառերը)					
<u>Այո</u> Ոչ					
Հաստատությունն ունի բուժաշխատող և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն (ընդգծել այո կամ ոչ բառերը)					
<u>Այո</u> Ոչ					
Բուժկետի գտնվելու հարկը և տարածքը	Բուժաշխատողներ թիվը և նրանց պաշտոնները	Բուժկետում առկա գույքը	Բուժկետը վերանոր ոգված է, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը)	Բուժկետի սանիտարական վիճակը	Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը
1-ինհարկ 8.1 քմ	դպ. բուժքույր 1	գրասեղան 1 աթոռ 2 դեղորայքի պահարան 1 տանոմետր/ճնշ./ 1 ջերմաչափ մահճակալ բժշկական կշեռք	<u>Այո</u> **Ոչ**	բավարար	Առկա Դեղորայք ջրածնի պերօքսիդ, ամոնիակի լուծույթ, յոդ, բինտ, բամբակ, սանտավիկ

Բուժկետը ունի ջրի ծորակ մշտական ջրամատակարարումով:

Բուժկետի հիմնախնդիրները՝ բուժկետի համար անհրաժեշտ են հասակաչափ, տապչան:

Տվյալներ հաստատությունում սննդի կետի առկայության և սննդի կազմակերպման վերաբերյալ

Հաստատությունում առկա է սննդի կետ, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը)					
Այո			Ոչ		
Հաստատության սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը					
Այո			Ոչ		
Սննդի կետի սանիտարական վիճակը՝ ըստ հակահամաճարակային ծառայության					
Սննդի կետի տեսակը (բուֆետ, ճաշարան)	Միաժամանակ սնվելու հնարավորություն ունեցող անձնաց թիվը և տարածքը (քմ)	Սառը և տաք հոսող ջրի առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը)	Լվացարանի և հիգիենայի պարագաների առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը)	Տաք սննդի հնարավորությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը)	Վերանորոգված է, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը)
ճաշարան	30 28.8 քմ	**Այո** Ոչ	**Այո** Ոչ	**Այո** Ոչ	**Այո** Ոչ

Ճաշարանը ունի շուրջօրյա ջրամատակարարում, գազամատակարարում, սառնարան, կահույք, գազօջախ:

Ճաշարանի սանիտարական վիճակը գերազանց է:

Հաստատության I-IV դասարանի աշակերտները օգտվում են ՄԱԿ-ի պարենի <<Տաք սնունդ>> ծրագրից:

Տվյալներ հաստատության ուսումնական լաբորատորիաների, կաբինետների և դահլիճների վերաբերյալ

Լաբորատորիաներ, կաբինետներ և դահլիճներ	Տարածքը (քմ)	Վերանորոգման կարիքը
Ֆիզիկայի լաբորատորիա, կաբինետ	32քմ	Մասնակի
Քիմիայի լաբորատորիա, կաբինետ	20.35քմ	Մասնակի
Կենսաբանության լաբորատորիա, կաբինետ		Չունի

Ռազմագիտության կաբինետ	22.1քմ	Չունի
Համակարգչային լաբորատորիա, կաբինետ	32քմ	Ունի

Ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիայի գույք և դիդակտիկ պարագաներ

	Անվանում	*20121-2022 ուստարի*	*2022-2023 ուստարի*
1.	²Ùå»ñÙ»ïñ	1	-
2.	ìáÉïÙ»ïñ	1	-
3.	àëåÝÛ³Ï	1	-
4.	´³ñáÙ»ïñ	1	-
5.	È³µáñ³ïáñ Ïß»éù	1	-
6.	ØáÉ»ÏáõÉÇ Ùá¹»É	1	-
7.	Þï³ïÇí	2	-
8.	´³Å³Ý.ïáõ÷	1	-
9.	äñÇ½Ù³ÛÇ Ñ³í³ù³Íáõ	1	-
10.	¸ÇÝ³ÙáÙ»ïñ	1	-
11.	Ð³Û»ÉÇÝ»ñÇ Ñ³í³ù³Íáõ	1	-
12.	ÈáõÛëÇ ¹Çý.Ñ³Ù³Ï³ñ·	1	-
13.	¸Ç³åá½ÇïÇíÝ»ñ	1	-
14.	Ð³Ë×³å³ÏÛ³ ï³Ï¹Çñ	1	-
15.	Ø³ñ¹áõ ÏÙ³Ëù	1	1
16.	Ø³ñ¹áõ Ý»ñù. ûñ·.ÙáõÉÛ³Å	1	1
17.	¶³Ý·»ñÇ Ñ³í³ù. 1ÏáÙåÉ.	6	6
18.	²ï³ÙÝ»ñÇ Ñ³í³ù.1ÏáÙåÉ.	3	3
19.	²ãùÇ ÙáõÉÛ³Å	1	1
20.	êñïÇ ÙáõÉÛ³Å	1	1
21.	ºñÇÏ³ÙÇ ÙáõÉÛ³Å	1	1
22.	àõÕ»ÕÇ ÙáõÉÛ³Å	1	1
23.	ÎáÏáñ¹Ç ÙáõÉÛ³Å	1	1
24.	Ø³ßÏÇ ÙáõÉÛ³Å	1	1
25.	²Ï³ÝçÇ ÙáõÉÛ³Å	1	1
26.	ÎñÍù³í³Ý¹.ûñ·.ÙáõÉÛ³Å	1	1
27.	àôë³·áïáõ áëÏáñ.ÙáõÉÛ³Å	1	1
28.	Ò»éùÇ ÏÙ³ËùÇ ÙáõÉÛ³Å	1	1
29.	àïÝ³Ã³ÃÇ ÏÙ³ËùÇ ÙáõÉ.	1	1
30.	²ñÙÝÏ³Ñá¹Ç ÏÙ³Ëù	1	1
31.	ÎáÝù³·áïáõ ÏÙ³Ëù	1	1
32.	Ø³Ýñ³å³ïñ.Ñ³í..1ÏáÙåÉ.	25	25
33.	ºñÏñ³Ï»Õ¨Ç Ï³éáõó.Ùá¹»É	1	1
34.	è»ÉÇ»ý	1	1
35.	öáñÓ³ÝáÃÝ»ñ ï³Ï¹Çñáí	2	2

36.	ä³ñµ»ñ³Ï³Ý Ñ³Ù³Ï³ñ·	1	1
37.	ØáÉ»ÏáõÉÇ Ï³éáõó.Ùá¹»É	2	2
38.	â³÷³·É³Ý	1	1
39.	¼ïÇã Ó³·³ñ	1	1
40.	¸ÜÂ-Ç Ùá¹»É	1	1
41.	Ð³í³Ý·	1	1
42.	Ø³Ýñ³¹Çï³Ï	1	1
43.	²é³çÇÝ û·ÝáõÃ.³Ñïõçï	1	1
44.	ÐÇ¹ñáëï.×Ýß.óáõó.ë³ñù	1	1
45.	¸ÇÝ³ÙáÙ»ïñ»ñÇ Ñ³í³ù.	1	1
46.	Îßé³ù³ñ»ñÇ Ñ³í³ù³Íáõ	1	1
47.	²½³ï ³ÝÏ.³ñ³·.óáõó.ë³ñù	1	1
48.	´ÛáõñÕ³í³Ý¹.Ùá¹»É. Ñ³í.	1	1
49.	´³½Ù³µÛáõñ»ÕÇ Ùá¹»É	1	1
50.	ú¹³Ñ³Ý ½³Ý·	1	1
51.	Ч³ÏáõáõÙ³ÛÇÝåáÙå	1	1
52.	Ø»Ë.³ÛÇù.³é³ç.óáõó.ë³ñù	1	1
53.	ÜÛáõïáÝÇ ËáÕáí³Ï	1	1
54.	¾É»Ïïñ³ëï³ïÇÏ ë³ñù	1	1
55.	ØÇÏñáëÏáå	1	1
56.	¾É.½³Ý·	1	1
57.	¾É.Ñáë³ÝùÇ áõÕÕÇã	1	1
58.	¾É»Ïïñ³Ï³Ý Ù»ù»Ý³	1	1
59.	¾É.·»Ý»ñ³ïáñÇ Ùá¹»É	1	1
60.	Ø³·ÝÇë³Ï³Ý ë³ñù	1	1
61.	üáïáÑáë.ÏÇñ³é.ë³ñù	1	1
62.	Î³ÉáñÇÙ»ïñ	1	1
63.	Ð³í³Ý· /ïÇ·»É /	1	1
64.	Ò³·³ñ	1	1
65.	Ø»ï³Õ.ç»ñÙ.Ñ³ïÏ.óáõó.ë³ñù	1	1
66.	äÇÝ¹ Ù³ñÙ.ç»ñ.ÁÝ¹.óáõóë³ñù	1	1
67.	Լաբորատոր գույք	1	1

Տվյալներ հաստատության գրադարանի և դրա գործունեության մասին

Ցուցանիշ	Տվյալներ
Գրադարանի տարածքը քմ-ով	21քմ
Ընթերցասրահիառկայությունը ևտարածքը քմ-ով	չկա
Գրադարանում/ընթերցասրահում միաժամանակ նստելու հնարավորություն ունեցող անձնաց թիվը	4
Գրադարանի գրապահոցի տարածքը քմ-ով	8քմ
Գրադարանում համակարգիչների թիվը	չկա
Գրադարանում ինտերնետին միացված համակարգչների թիվը	չկա

Գրադարանային ֆոնդում առկա գրքերի /բացառել ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերը/ ընդհանուր թիվը, այդ թվում՝	1115
-գեղարվեստական գրքերի թիվը	
-տեղեկատվական գրքերի թիվը /բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն/	161
-ուսումնամեթոդական գրքերի թիվը	235
-ամսագերի թիվը	471
-այլ	6
Վերջին անգամ գարդարանային ֆոնդը նոր գրականությամբ համալրվելու ամսաթիվը	10.10.2014թ.
Ամենից հաճախ գրադարանից վերցվող գրքերը	Հեքիաթներ պատմվածքներ
Գրադարանից միջինում ամսեկան օգտվողների թիվը	
Գրադարանում բաժանորդագրված ուսուցիչների և դպրոցի մյուս աշխատակիցների թիվը	20
Գրադարանում բաժանորդագրված սովորողների թիվը	67
Պատասխանել այո կամ ոչ	
Վերանորոգվա՞ծ է արդյոք գրադարանը	ոչ
Անց կացվու՞մ են արդյոք գրադարանում դասեր և պարապմունքներ	ոչ
Գրադարանավարն ունի՞ համապատասխան բարձրագույն կրթություն	այո
Վերջին 3 տարվա ընթացքում գրադարանվարն անցե՞լ է վերապատրաստում գրադարանային աշխատանքի ուղղությամբ	այո
Գրադարանը հանդիսանու՞մ է հանրապետության, այլ երկրների կամ կազմակերպությունների գրադարանների բաժանորդ և օգտվում է արդյոք նրանց ռեսուսներից	ոչ
Գարդարանն ունի՞ էլեկտրոնային ռեսուսներ, որքան	ոչ
Սովորողները իրենց տնային հանձնարարությունները կատարելիսօգտվո՞ւմենգրադարանային ռեսուսներից	այո
Գրադանավարը սովորողներին օգնու՞մ է հայթհայթել անհրաժեշտ նյութեր դասարանական և տնային հանձնարարությունների կատարման համար և ընթերցանության գրքերի ընտրության հարցում	այո
Սովորողները կարո՞ղ են ինքնուրույն ու ազատ մոտենալ գրադրանի գրադարակներին/պահարաններին, ընտրել իրենց անհրաժեշտ գրականությունը և վերցնել այն ընթերցասրահում աշխատելու ժամանակ	այո
Գրադրանն ունի՞ գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագիր	այո
Գրադանավարըկարողանո՞ւմ է օգտվել գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագրից	այո

Հաստատության գրադարանային ֆոնդը հնացած և մաշված է, չի համապատասխանում ժամանակակից գրադարաններին ներկայացվող պահանջներին՝ տարածքի, կահավորման եւ տեխնիկական սպասարկման առումով (էլեկտրոնային գրադարաններ):

Դպրոցի սպորտդահլիճն ու կտուրն ունեն մասնակի վերանորոգման, մարզագույքով համալրման կարիք:

Դպրոցն ունի սպորտհրապարակ, որն անխնամ է:

ՈՒսումնական միջավայր ոլորտում կարևորում եմ նաև ներառական կրթությունը: Հնուց ի վեր մարդկությունը ունեցել է հասարակության անդամների սոցիալականացման խնդիրներ, որոնք տարբեր ժամանակներում ստացել են տարբեր լուծումներ:

Ներառական կրթությունը յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի համար, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է: Ներառական կրթության իրականացման անկյունաքարը հանդիսանում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու կարիքի ճիշտ և անաչառ գնահատումը, ինչին հետևում է կրթության կազմակերպման ամբողջ գործընթացը, այդ թվում՝ ֆինանսավորումը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) է համարվում այն անձը, ով ունի ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացվելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ: Դպրոցում այս պահին սովորում են ԿԱՊԿՈՒ 5 աշակերտ: Ներառական կրթություն ստացող երեխաների համար ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության և որակի վրա ազդող լրջագույն գործոն է կոռուպցիան, որի համար ստեղծված հնարավորությունները հարկավոր է վերացնել:

Հիմնախնդիրներ

1. Դպրոցները ուռճացնում են ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը՝ լրացուցիչ ֆինանսավորում ստանալու ակնկալիքով: Ներառական ծրագրով յուրաքանչյուր աշակերտի թվով դպրոցին հատկացվող ֆինանսավորումն ավելի քան չորս անգամ գերազանցում է կրթության առանձնահատուկ պայմանի կարիք չունեցող երեխայի համար հատկացվող ֆինանսավորումը՝ ներառելով սննդի և տրանսպորտի ծախսերը, բազմամասնագիտական թիմի անդամների աշխատավարձերը, ինչպես նաև՝ դպրոցներում իրականացվող այլ

ծախսեր: Պատշաճ վերահսկողության բացակայության հանգամանքներում դպրոցները ակնհայտորեն կարող են շահագրգռված լինել ստանալու լրացուցիչ ֆինանսավորում:

2. Դպրոցների կողմից կազմակերպվող սննդի մատակարարման մրցույթում կան կոռուպցիոն ռիսկեր: Օրինակ, դպրոցի տնօրենը կարող է պայմանավորվել սնունդ մատակարարող կազմակերպության հետ, որ մեկ փաթեթ սննդի համար փոխանցվող և այդ փաթեթի իրական արժեքի տարբերությունը կամ դրա մի մասը տրամադրվի իրեն: Կամ սնունդ մատակարարող կազմակերպությունը կարող է լինել տնօրենի կամ նրա հետ փոխկապակցված անձի բիզնեսը, և տնօրենն ունենա մասնավոր շահ մրցույթում տվյալ կազմակերպության հաղթելու գործում, որի կանխարգելման եղանակները բացակայում են:

3. ԿԱՊԿՈՒ երեխաների տրանսպորտի համար նախատեսված գումարների տնօրինումը անվերահսկելի է, ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր երեխայի համար հատկացվող ֆինանսների մեջ ներառված են նաև տրանսպորտի ծախսերը, որն օրական կազմում է 200 ՀՀ դրամ: Տրանսպորտի ծախսերն առձեռն տրամադրվում են սովորողին (ծնողին) կամ նրա խնամակալին: Սակայն հաճախ երեխաների ծնողները հրաժարվում են տրանսպորտի ծախսերից, որի դեպքում որևէ ֆորմալ ընթացակարգ նախատեսված չէ: Իսկ ծնողների մի մասն էլ նույնիսկ տեղյակ չէ, որ իրենց գումար պետք է հատկացվի: Ուստի պարզ չէ, թե քանի ծնող է հրաժարվել տրանսպորտի համար հատկացվող գումարից, որքան գումար է արդյունքում տնտեսվել և այդ տնտեսված գումարներն ինչ նպատակներով են ծախսվել: Նման իրավիճակներում տնօրենները կարող են չարաշահել իրենց դիրքը և ըստ ցանկության տնօրինել տրանսպորտի համար հատկացվող բյուջեն:

Այս հիմնախնդիրներին չէի կարող իմ զարգացման ծրագրում չանդրադառնալ, քանզի տնօրինության կաղմից իրականացվող նման չարաշահումները իրենց վատ հետևանքն են թողնում դպրոցի հեղինակության, անձնակազմի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա:

ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքը հիմնականում տարվում է խաղերի միջոցով, և դպրոցում իրենց համար նախատեսված ռեսուրս-սենյակի դիդակտիկ նյութերը կարիք ունեն համալրման:

Հաստատությունում ներառական կրթության իրականացմանը վերաբերվող չափանիշներ

Չափանիշ	Այո	Ոչ
Ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է հաստատության զարգացման ծրագրում	Այո Ներառված է հաստատության զարգացման ծրագրում	
Հաստատության զարգացման ծրագրում պլանավորված են ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներ, այդ թվում ուսուցիչների վերապատրաստումներ	Այո անցկացվել են մի շարք միջոցառումներ և վերապատրաստումներ	
Հաստատության տնօրենն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման լիազորություններով տեղակալ/կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին	այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին	
Հաստատության վեբ կայքում գործում է ներառական կրթության բաժին՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորությամբ		*Ոչ*
Հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր:	Այո Անցկացվել է 2 սեմինար պարապմունքներ որոնցում ներգրավված են եղել 10 ական աշակերտներ, իսկ դասընթացների տեսքով պարապմունքները անցկացվել են ամիսը մեկ անգամ հաճախականությամբ 15-ական աշակերտներով:	
Վերջին 5 տարում տնօրինությունը մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապրաստման		
Հաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված և վերապատրաստող ուսուցիչներ: Վերջին 5	Այո	

տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը		
Հաստատությունում ամենուրեք (դասասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն) ապահովված է տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ֆիզիկական մատչելիություն	Այո Հաստատության մուտքը ունի թեքահարթակ նախատեսված տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար:	
Հաստատությունն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող Սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան, ուսոցչի օգնական և այլն)	***Այո*** 1. Հատուկ մանկավարժ 1. Սոց. մանկավարժ 2. Հոգեբան ԲՄ թիմը կատարում է դասալսումներ, տունայցեր, զրույցներ՝ աշակերտների ծնողների և ուսուցչական անձնակազմի հետ, որոնց հիման վրա կատարվում են խմբային և անհատական պարապմունքներ: Յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ աշակերտի համար կազմվում է ԱՈՒՊ-ներ: 19	
Հաստատությունում առկա են բավարար քանակի և որակի սարքավորումներ և ուսումնամեթոդական նյութեր ֆունկցիաների տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողների համար	Հաստատությունը համալրված է դիդակտիկ պարագաներով,ուսումնամեթոդական նյութերով, բայց կարիք ունի մի շարք սարքավորումների ֆունկցիաների տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողների համար:	
Հաստատությունում առկա են բավարար քանակի և որակի սարքավորումներ և ուսումնամեթոդական նուրեր լսողության և տեսողության ֆունկցիայի բացակայություն կամ սահմանափակում ունեցող Սովորողների համար		*Ոչ*
Դասասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ կրթության առանձնահատուկ	Այո, դասավորվածությունն այնպիսին է , որ երեխաները մեկուսացված չեն:	

պայմանների կարիք ունեցող սովորողները մեկուսացված չեն		
Հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար		
Հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող ֆիզիկական (թեքահարթակ, հենակ և այլն) խոչընդոտները	Այո Հաստատության մուտքը ունի թեքահարթակ	
Հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական (վերաբերմունք, կարծրատիպ) խոչընդոտները	Այո	
Անհատական ուսումնական պլանները (ԱՈՒՊ) մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը	Այո ԱՈՒՊ-ները կազմվում են ելնելով սովորողների հատուկ կարիքներից, որոնց հիման վրա կազմակերպվում են համապատասխան պարապմունքներ	
Ուսուցիչների թիվը, ովքեր ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ	16	
Ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր	Ուսուցիչները գիտակցում են և աջակցում են նմանատիպ բոլոր կարծրատիպերի վերացմանը	
Ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ, անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ	Բոլոր ուսուցիչները ունեն հավասար վերաբերմունք անկախ երեխայի ունեցած առանձնահատուկ կարիքներից	

կարիքներից		
Ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ, երևույթ դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում, և նույնիսկ սեփական վարքագծում	Ուսուցիչները հմուտ են, վերապատրաստված են և կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ, երևույթ դասարանում և նույնիսկ սեփական վարքագծում	
Սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը	Այո Հաստատությունը համագործակցում է բարերարների հետ , որոնք դրամական օգնություն են ցուցաբերում;Համագործակցում է նաև <<Կարիտաս>>, <<Առավոտ>>, <<Հույս>> ՀԿ-ի հետ:Ամերիկահայ բարերարը դրամական օգնության տեսքով աջակցություն է ցուցաբերել անապահով երեխաների ընտանիքներին:Փոխանցվել է դասագրքերի վարձավճարները թվով 9 երեխայի;	

Հաստատությունում տնօրինությունը, ուսուցչական անձնակազմը և ԲՄ թիմը աջակցում է սովորողների միջև հավասարության ապահովմանը ինչպես նաև միջոցներ է ձեռնարկում դպրոցում ներառական կրթության լիարժեք իրականացման համար:

ՈՒսումնական հաստատությունում ապահովված է սեռերի և ազգային փոքրամասնությունների երեխաների միջև հավասարությունը:

Անհրաժեշտ է համագործակցել հոգեբանամանկավարժական վերապատրաստում իրականացնող մարմինների հետ, որի գործունեության արդյունքում կբարելավվեն և կամրապնդվեն մանկավարժ-ԿԱՊԿՈՒ աշակերտ, աշակերտ-ԿԱՊԿՈՒ աշակերտ փոխհարաբերությունները, ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ կազմակերպել դժվար դաստիարակվող երեխաների հետ:

6.7 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ , ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցիչն իր աշխատանքին զուգահեռ պարբերաբար վերապատրաստվելու, մասնագիտական նորություններին և դասավանդման նոր մեթոդներին ու ռազմավարություններին ծանոթանալու հնարավորություն պիտի ստանա: Իմ խորին համոզմամբ ուսուցիչն իր մասնագիտական աճը պետք է ստանա դպրոցում՝ իր աշխատանքի ընթացքում: Դպրոցն ունի փորձառու ուսուցիչներ, մեթոդիստներ, և սա կարծես հարցին որոշակի լուծում է տալիս. նրանք կարող են սկսնակ և սակավափորձ ուսուցիչների համար վերապատրաստողներ լինել: Սա մասնագիտական զարգացման մի նոր որակ է, որ կարող են ապահովել այն ուսուցիչները, ովքեր ունեն՝

- ունկնդիրների վստահությունը շահելու համար անհրաժեշտ անցյալ և փորձ,
- կրթակարգի, չափորոշչի և ծրագրի բովանդակության լիարժեք իրազեկություն և հայեցակարգ,
- վերապատրաստողի հմտություն,
- մասնագիտական իրազեկություն, անձնային որակներ և մտածողության ճկունություն,
- նոր գաղափաներ ստեղծելու, կանխատեսելու, հիմնախնդիրը տեսնելու և այլ կարողություններ:

Այո՛, դժվար է ուսուցիչ լինել, առանց ավանդական հեղինակության և հարգանքի:

Ընթացիկ վերափոխումները դժվար կացության մեջ են դրել ուսուցիչներին՝ նրանց վերապահելով ժամանակակից մեթոդներով ուսուցման ամենապատասխանատու դերը:

Առանձնապես կարևորելով հանրակրթության պետական կրթակարգում ընդգծված պահանջը կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորման վերաբերյալ՝ պետք է ձգտել ուսուցիչների ուշադրությունը հրավիրել հենց այդ հարցի վրա, գործնականորեն ցույց տալ, օրինակներ նշել, թե այս կամ այն առաջադրանքով ու վարժություններով որոշակիորեն ինչ կարողություն ենք ցանկանում ձևավորել սովորողների մեջ:

Այս հարցը պիտի չանտեսվի նաև յուրաքանչյուր դասի նպատակները նշելիս ու ձևակերպելիս: Դրանք ընդհանուր բնույթ չպիտի ունենան, այլ խիստ որոշակի: Եվ եթե մենք

ուզում ենք փոխել կրթության որակը ապա նախ պետք է բարձրացնենք մեր մասնագիտական որակը, գործի դնել ցանկացած միջոց, փնտրել ելքեր, օգտվել հնարավորություններից: Փորձառու ուսուցիչն իր փորձը փոխանցելով սկսնակ ուսուցիչներին, մեր փորձառուների փորձի փոխանակումը կազմակերպելով մենք կբարձրացնենք աշխատակազմի ընդհանուր որակը, իսկ փորձառու ուսուցիչները պետք է իրենց զգան գնահատված:

6.8 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության որակ ՝ կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների եւ խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք, որը գնահատվում է ՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը եւ ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների:

Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից:

Այսօր, երբ կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը, խնդիր է դրվել սովորեցնելու սովորել, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները: Այդ նպատակով անհրաժեշտ է սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ և հմտություններ:

Սովորողը պետք է գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային և այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:

Կրթության որակը կարելի է բարձրացնել՝ բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով այն փոխելու հնարավորությունները: Անհրաժեշտ է դիտարկել հետևյալ գործոնները.

1. Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը:
2. Կրթական գործընթացի կատարողականը:
3. Կրթական գործընթացի արդյունավետությունը:
4. Կրթական գործընթացի որակը կրթական աստիճաններում:
5. Դասերի, ուսումնական միջոցառումների որակը:

Վերլուծության արդյունքում պարզվեց, որ հաստատությունն ապահովում է սովորողների առաջխաղացումը և բարձր առաջադիմությունը: Տարրական օղակում առաջադիմությունը շատ ավելի բարձր է, քան միջին դասարաններում: Միջին դասարաններում առաջանում է հետաքրքրություն առաձին առարկաների գծով, առաջ է գալիս մասնագիտության կողմնորշման հարցը, և որոշ առարկաներ անտեսված են մնում :

2021-2022 ուստարվա 9-րդ դասարանի ավարտական քննությունների միջին միավորները ավելի բարձր են 2020-2021 ուստարվա համեմատությամբ, իսկ 4-րդ դասարանցիների միջին գնահատականը նվազել է:

Կրթության որակը 2021-2023 ուստարիների ընթացքում



Սովորողները մասնակցություն են ցուցաբերել տարբեր առարկաների օլիմպիադաների, սակայն մարզային փուլից առաջ չեն գնացել:

Հաստատության սովորողները ակտիվորեն մասնակցում են մարզական և մշակույթի ոլորտում ստեղծագործական ու կատարողական մրցույթներին:

Մեր առջև ***խնդիր ենք դնում*** բարձրացնելու աշխատանքային կարգապահությունը և ուսուցման որակը:

Կրթության որակի բարձրացման քայլարշավ

✓ Հորդորել ուսուցիչներին հաճախակի կազմակերպել բաց դասեր և նրանց հետ վերլուծել դասը:

✓ Ուսուցիչների հետ համատեղ կազմել ինքնազարգացման պլանի օրինակելի նմուշ,

✓ Կազմել պլան՝ մ/մ-ների կողմից մանկավարժների ինքնազարգացման աշխատանքների արդյունքում հետաքրքրաշարժ ստեղծագործական աշխատանքները ներկայացնելու համար,

- ✓ Աջակցել մանկավարժներին ՝ կազմելու և հրապարակելու իրենց մեթոդական աշխատանքներ,
- ✓ Ուսուցիչներին ներկայացնել նոր ՀՊՉ-ն և փոփոխությունները,
- ✓ Նպաստել, աջակցել և ապահովել ուսուցիչների մասնակցությունը մրցույթներին,
- ✓ Ուսուցիչների համակարգչային գրագիտությունը բարելավելու ուղղությամբ քայլեր ձեռնարկել:
- ✓ Վերանայել ուսուցման բովանդակությունը, փոփոխել և դարձնել արդի պահանջներին համապատասխան.
- ✓ Արժևորել և նախապատվությունը տալ ուսուցման պրակտիկ ուղղվածության,
- ✓ Ուսուցիչների հետ համատեղ մշակել սովորողների ինքնուրույնության կայացմանը սատարող ռազմավարություն և իրացնել այն ինչպես կրթության բովանդակությամբ ու գնահատման համակարգով, այնպես էլ ուսուցման տեխնոլոգիաներով:
- ✓ Սովորողների ուսումնական գործունեությունը կազմակերպել որպես ուսումնահետազոտական գործունեություն:
- ✓ Տարվա լավագույն ուսուցիչների համար կիրառել խրախուսման տարբեր միջոցներ՝դրամական պարգևատրում, շնորհակալագիր և այլն:

արձանագրենք մի կարևոր փաստ.

մատաղ սերնդին հանրության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքների պատվաստումն իրականացվում է հիմնականում այլ գործոնների շնորհիվ: Դա ժողովրդավարական համակարգի տարրերի առկայությունն է հասարակական կառուցվածքներում, ուսումնական գործընացի ընդհանուր կուլտուրան է, կրթական համակարգում հաստատված բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, սովորողների և ուսուցիչների հարաբերությունների ժողովրդավարական ոճը, ի վերջո՝ օրենքի գերակայության հաստատումն ու նրա հարգումը կրթության բոլոր սուբյեկտների կողմից:

Կարճ ասած, դաստիարակության մեջ որոշիչը միջավայրն է. եթե հասարակությունն ինքը չի ապրում ժողովրդավարական արժեքներով, դրանք չի կարող մատուցել և ստիպել նրանցով ապրել իր սերունդներին: Մարդն ընդօրինակում և վարքի նորմա է դարձնում այն ամենը, ինչ տեսնում է, ինչի ներգործությունն իր վրա զգում է, ինչը կարևորում է իր սոցիալական առաջընթացի ու բարոյական հասունացման համար: Ուրեմն դաստիարակության ու սոցիալականացման խնդիրներում խոսքն ու խրատը, քարոզը, արհեստականորեն ստեղծված կարգ ու կանոնը որոշիչ չեն, **որոշիչ են կրթության սուբյեկտների միջև հարաբերությունների ընդհանուր կուլտուրան, աշխատանքային և ուսումնական նորմալ պայմանները, ուսումնական պրոցեսում սովորողների ազատության և ինքնուրույնության աստիճանը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը:** Դաստիարակության ընդհանուր ռազմավարության և օպտիմալ տեխնոլոգիաների բացակայության պայմաններում ուսուցչի դերն առավել կարևորություն է ստանում: Ուսուցչի բարոյական նկարագիրը, մեթոդական պատրաստվածության մակարդակը, նրա անձնային ու ինտելեկտուալ որակները դաստիարակչական մեծ ներուժ ունեն:

6.9 ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դպրոցի մյուս կարևոր ուղղությունը նրա բյուջետային հնարավորություններն են: Քանի որ դպրոցը հիմնական միակ ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից, ապա հաջողությունների և դժվարությունների հիմնական պատճառը այդ միջոցների բավարար և անբավարար լինելն է: Դպրոցներն այսօր ֆինանսավորվում են աշակերտ-թվով և դպրոցի բյուջետային միջոցները բավարարում են, եթե աշակերտների թիվը դասարանում բարձր է միջինից: Եթե այդ միջոցներն անբավարար են, ապա դպրոցը բյուջետային միջոցների հետ կապված իր խնդիրները փորձում է լուծել՝ որոշ ուղղություններում քիչ ներդրումներ կատարելով:

ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 30 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ					
	2019թ.	**2020թ.**	**2021թ.**	**2022թ.**	**2023թ. 9 ամիս**
Տարեկան ֆինանսավորում	50996,7	47166,1	48925,0	48211,6	36051,7
Տարեկան աշխատավարձի ֆոնդ	43661,3	42942,3	41937,4	42712,6	29151,0
Տարեկան կոմունալ և այլ ծախս	6955,6	4122,2	4104,7	5063,5	4446,0
Գրքերի գումար	64,0	60,0	64,0	60,0	
Ուսուցիչների միջին ամսեկան աշխ.	95400				
Վարչական միջին ամսեկան աշխ.	92576				

Միջոցների սղության դեպքում հիմնական ուղղություններով կատարվող բյուջետային հատկացումները սովորաբար նվազեցվում են խնայողությունների հաշվին: Հաճախ բյուջետային միջոցների սղություն առաջանում է բյուջեի սխալ պլանավորման պատճառով: Սխալ պլանավորման պատճառ է հանդիսանում սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում ուսումնական պլանի և աշակերտ-թվով ֆինանսավորման վերահաշվարկով կատարվող փոփոխությունների սխալ կանխատեսումը: Դպրոցը ֆինանսավորումը ստանում է ամիս առ ամիս: Որպես կանոն այդ միջոցները ուղղվում են աշխատավարձի, եկամտահարկի, կոմունալ վճարների մուծմանը և միայն դրանից հետո՝ այլ ծախսերի: Եթե դպրոցը այդ վերջին ծախսերը կատարում է չպլանավորված ձևով՝ առանց հաշվի առնելու սպասվելիք մուտքերի չափը, ունենում է խնդիրներ աշխատավարձի, եկամտահարկի, կոմունալ վճարների ուղղությամբ, որը կարող է հանգեցնել կազմակերպական հետևանքների և վարչական պատասխանատվության: Այստեղ ստիպված եմ նաև նշել որոշ տնօրենների

կողմից իրականացվող ոչ այնքան հազվադեպ հանդիպող ֆինանսական չարաշահումների մասին:

Դպրոցը ձեռնարկատիրական գործունեության ոչ մի տեսակ չի իրականացնում, բացի պետբյուջեի ֆինանսավորումից, օրենսդրությամբ չարգելված ոչ մի այլ աղբյուրից չի ֆինանսավորվում:

Դպրոցի կարիքները հոգալու համար անհրաժեշտ ենք համարում ծավալել ձեռնարկատիրական գործունեություն՝ որպես ֆինանսավորման լրացուցիչ աղբյուր: Այդպիսի աղբյուրներ կարող են լինել.

- Հիմնադրի սահմանած կարգով վճարովի կրթական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները,
- ՀՀ օրենսդրությամբ չարգելված և կանոնադրությանը չհակասող գործունեությունից ստացված միջոցները,
- Տարածքների և գույքի վարձակալությունը,
- Բարեգործների նպատակային ներդրումները, նվիրատվությունները,
- Դպրոցի շրջանավարտների խորհուրդը, որը կնպաստի շրջանավարտների արդյունավետ և նպատակային մասնակցությունը դպրոցի խնդիրների լուծմանը.
- ՈՒսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում.
- Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում:

7. ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Մանկավարժական գիտության, կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը: Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը:

Դպրոցում այսպիսի փոփոխություններ կատարելը պահանջում է ժամանակ և միջոցների ներդրում: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման կարողություններ: Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր

գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալները ուղղելու և մոտեցումները վերանայելու համար: Դպրոցի վարչական կազմն էլ պետք է կարողանա ուսուցչի աշխատանքը վերահսկել, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալ և ապահովել նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը:

Մյուս կողմից՝ ցանկալի է, որ դպրոցն ըստ իր զարգացման առաջնահերթությունների ներդնի գիտականորեն հիմնավորված որևէ նոր, զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարություն: Այն հնարավորություն կտա դպրոցի աշխատակիցներին, աշակերտներին և ծնողներին, ինչպես նաև հիմնադրին գնահատելու դպրոցի ջանքերը գիտական տեսանկյունից՝ դրանով դպրոցը առանձնացնելով մյուս դպրոցներից, օգտագործելով, տարածելով հաջողված փորձի արդյունքները:

Այդպիսի նորամուծությունների օրինակ կարող են լինել

Որպես նորամուծություններ կարող են լինել օրինակ.

- «Մաթեմատիկայի էլեկտրոնային ռեսուրսների հավաքագրումը և նրանց կիրառումը դպրոցի դասերին»,
- «Հայոց պատմության առանցքային նշանակություն իրադարձությունների պատճառա-հետևանքային կապերի վերլուծումը»,
- «Գործնական անգլերենի ուսուցումը»,
- «Արդյունավետ ուսուցման մեթոդների և կարողությունների ուսուցում»
- Ծնողական համալսարանը,
- Աշակերտական ինքնավարությունը,
- <<Երկրի քաղաքացի>> ծրագիրը,

Մյուս կողմից, Հայաստան երկրի կայացման և հզորացման համար, որպես «պետական պատվեր» կարևորվում են այնպիսի նորամուծություններ, որպեսիք կարող են լինել օրինակ «Առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության գործնական աշխատանքներ»:

Այս հիմնախնդիրները ***լուծելու նպատակով*** հարկ ենք համարում ՏՀՏ-ների կիրառման միջոցով բարձրացնել ուսուցման արդյունավետությունը, ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի միջոցով ապահովել սովորողների անհատական առաջընթացը:

8.ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:

Սովորողների հայրենասիրական դաստիարակությունը մշտապես եղել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն են անձի մոտ հայրենիքի նկատմամբ պատկերացումները ճիշտ ձևավորելու, սեր արմատավորելու համար:

Հայրենասիրական դաստիարակության բնագավառում ուղենշային նպատակներին հասնելու համար մեր կարծիքով անհրաժեշտ է՝

- դպրոցի վարչական և ուսուցչական անձնակազմին ակտիվորեն ընդգրկել սովորողների հայրենասիրական դաստիարակության ծավալման և կատարելագործման գործընթացներում,
- պարբերաբար համակարգել, վերլուծել և գնահատել ծրագրավորված հայրենասիրական միջոցառումների կատարման արդյունավետությունը,
- դպրոցական հիմնական բոլոր միջոցառումներն իրականացնելիս ապահովել հայկական խորհրդանիշների և հայրենասիրական գաղափարների գործածումը,
- ամփոփել և տարածել հայրենասիրական դաստիարակության ասպարեզում լավագույն մասնագետների մանկավարժական առաջավոր փորձը,
- հայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդնել աշխատանքի նոր ձևեր և մեթոդներ, ինչպիսիք են զանգվածային լրատվության միջոցները և ժամանակակից տեխնոլոգիաները՝ ֆիլմեր, սկավառակներ, էլեկտրոնային նյութեր և այլն,
- դպրոցի աշակերտական խորհրդին ընդգրկել ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումներում,
- հաճախակի անցկացնել ռազմահայրենասիրական բնույթի մրցույթներ, հանդիպումներ, զրույցներ և այլ միջոցառումներ, ինչպիսիք են՝
- «Հայոց պատմություն», «Հայ ազգ», «Հայոց լեզու», «Հայ ընտանիք» թեմաներով հանդիպումները, զրույցները, սեմինարները և այլ միջոցառումները,

• հայտնի մարդկանց, զինվորների, հայ ազատամարտիկների, պատերազմի հաշմանդամների հետ հանդիպումները:

9.ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դպրոցի գլխավոր նպատակների զգալի մասը պայմանավորված է մարդկային գործոնով և ենթադրվում է, որ առաջիկայում դպրոցում կապահովվի համապատասխան նորմալ միջավայր և առաջին հերթին վերանորոգում, կահավորում, տեխնիկական հագեցվածություն:

- Դպրոցում իրականացվող ռազմավարական մոտեցումներում նախապատվությունը տալ նրանց, որոնք հնարավորություն են տալիս համեմատաբար փոքր ներդրումներով ստանալ շոշափելի արդյունք և դա իրականանա հնարավորինս կարճ ժամանակամիջոցում,
- ստեղծել դպրոցում զարգացումների համար բարենպաստ միջավայր,
- դպրոցական ենթակառուցվածքների / մեթոդմիավորում, կաբինետներ, և այլն/ համար սահմանել գործունեության այնպիսի կանոնակարգ, որոնք կխթանեն այդ օղակների զարգացումը և առանձին ուսուցիչների նախաձեռնություններն ու ստեղծագործական ուղիները,
- համագործակցային աշխատանք դպրոցի բոլոր օղակների միջև, սկսած ուսուցչի կողմից դասերի համագործակցային անցկացումից, ներառարկայական ուսուցիչների աշխատանքային համագործակցությունից, միջառարկայական համագործակցային թեմատիկ աշխատանքների կազմումով,
- նոր որակի դպրոցում գլխավոր նպատակի իրականացմանը խոչընդոտ է հանդիսանում կառավարման զուտ վարչահրամայական մոտեցումը. անցում պետք է արվի կառավարման ժողովրդավարական և համագործակցային համակարգին,
- տիրապետել կառավարման նորագույն մեթոդներին,
- նպաստել կրթության բովանդակության արդիականացմանը,
- տարաբնույթ կրթական ծրագրերի մասնակցություն, ինչպես սովորողների, այնպես էլ մանկավարժների համար,

- լուրջ ուշադրություն դարձնել արժեքային համակարգի ձևավորմանը, կարևորելով ազգային հիմնախնդիրների լուծման գործում սովորողների մասնակցության անհրաժեշտությունը:

Հայտնի է, որ դպրոցի գործունեությունը գնահատվում է ըստ նրա 4 ոլորտներում իրականացվող աշխատանքների, որոնք են.

ա. դպրոցի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը,

բ. դպրոցի արդյունավետությունը և ուսումնական որակը,

գ. դպրոցում ներառական կրթության և հավասարության ապահովումը,

դ. համայնքային մասնակցությունը դպրոցում:

Ըստ այդմ, դպրոցում **1-ին** /դպրոցի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը/ **ոլորտին ներկայացվող չափորոշիչներին լիարժեք բավարարելու համար նպատակներ են հանդիսանում.**

1. դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացումը,
2. դպրոցի կաբինետների, լաբորատորիաների կահավորումը,
3. դպրոցի անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերի ապահովում,
4. սովորողների առողջության պահպանմանն ուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործումը,

2-րդ / դպրոցի արդյունավետությունը և ուսումնական որակը / ոլորտի համար՝

1. դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման բարձրացումը,
2. կրթության որակի ներքին գնահատման համակարգի կատարելագործումը,
3. սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրումը,
4. սովորողների մասնագիտական կողմնորոշման և հետագա կրթության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորումը,
5. դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործումը,
6. ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացումը :

3-րդ /դպրոցում ներառական կրթության և հավասարության ապահովումը /ոլորտի համար՝

1. կրթության մատչելիության ապահովումը, դպրոցում այնպիսի հոգեբանամանկավարժական միջավայրի ձևավորումը, որը թույլ կտա յուրաքանչյուր աշակերտի իր հնարավորություններին և հակումներին համապատասխան յուրացնել կրթական ծրագիրը և լինել հաջողակ,
2. դպրոցի աշխատակազմի գիտելիքների և հմտությունների արդիականացում ներառական կրթության ոլորտում:

4-րդ/ համայնքային մասնակցությունը դպրոցում/ ոլորտի համար՝

1. դպրոց-ծնող-համայնք կապերի ամրապնդումը,
2. դպրոցի կառավարման ժողովրդավարացումը, դպրոցի զարգացման գործում ծնողների և համայնքի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացումը: Առաջ քաշված նպատակներն իրականացնելու համար դպրոցը իր առջև դնում է **հետևյալ խնդիրների լուծումը**.

Առկա հիմնախնդիրներ	**Հիմնախնդիրների լուծման գործողություններ**	**Պատասխանատուներ**	**Կատարման ժամանակացույց**
Մանկավարժական համակազմի գործունեության բարելավում և կատարելագործում	1. Ուսուցիչներին ծանոթացնել նոր ՀՊՉ-ի փոփոխություններին և դրանից բխող ծրագրային, առարկայական չափորոշիչներին և մեթոդաբանությանը:	Տնօրեն Տնօրենի ուս. գծով տեղակալ	2023-2028թթ
	ՈՒսուցիչներին արդյունավետ կերպով նախապատրաստել կամավոր ատեստավորման նախապատրաստում	Տնօրեն Տնօրենի ուս. գծով տեղակալ	2023-2028թթ
	Յուրաքանչյուր տարի ավելացնել		2023-2028թթ

	տարակարգ ստացած ուսուցիչների թիվը		
	ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատատող մասնագիտական խմբի անընդհատ վերապատրաստում նոր պահանջներին բարելավելու համար,	Տնօրեն Տնօրենի ուս. գծով տեղակալ	2023-2028թթ
Ուսումնական միջավայրի բարելավում	ՈՒսուցչանոց, որտեղ ուսուցիչները ոչ միայն կպատրաստվեն դասին, քննարկումներ, սեմինարներ,Մ/Մ նիստեր կանցկացնեն,այլև կկարողանան հանգստանալ:	Տնօրեն Համակարգող Մանկավարժներ	2024-2025 թթ
	Դպրոցում ստեղծել աշխարհագրության, պատմության, օտար լեզուների հագեցված կաբինետներ	Տնօրեն Համակարգող մ/մ նախագահներ	2024-2025թթ
	Համակարգչով, համապատասխան գույքով հագեցած ռեսուրս-կենտրոն:	Տնօրեն Համակարգող	20243-2028թթ
	Համապատասխան տարածք ունենալուց հետո հետամուտ	Տնօրեն Համակարգող	2023-2028թթ

	լինել նախակրթարանի բացմանը:		
Ուսումնական միջավայրի բարելավում	Վերանորոգված, գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագիր ունեցող և համակարգիչներով հագեցած գրադարան. որտեղ հնարավոր կլինի անցկացնել դասեր, պարապմունքներ:	Տնօրեն Համակարգող Գրադարանավար	2024-2028թթ
Հոգաբարձուների, շրջանավարտների խորհուրդների ձևավորում	Ծնողների համայնքի օգնությամբ հնարավորության դեպքում ստեղծել շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդներ	Տնօրեն Շրջանավարտներ Ծնողներ Համայնքի ներկայացուցիչներ	2024-2026թթ
Խորհրդակցական մարմինների և կառավարման խորհրդի դերի բարձրացում	Ակտիվացնել համագործակցությունը խորհրդակցական մարմինների և կառավարման խորհրդի միջև	Տնօրեն Կառավարման խորհուրդ Խորհրդակցական մարմիններ	2023-2028թթ
Նյութատեխնիկական բազայի հարստացում	1.Ձեռք բերել էլեկտրոնային գրատախտակ, նոր սերնդի համակարգիչներ և պրոյեկտորներ, լինգաֆոնային դասասենյակի համար գույք և տեխնիկա 2. Լաբորատորիաների համար ձեռք բերել փորձերի համար անհրաժեշտ նյութեր, գույք	Տնօրեն Համակարգող	2023-2028թթ

10.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայտնի է, որ վտանգներն այն արտաքին գործոններն են, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենանալ դպրոցի նպատակների իրագործման վրա կամ դրանք դարձնել անհասանելի:

Ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ դպրոցում, ընդհանրապես փոփոխություններին ուղղված ցանկացած գործողություններ (միջոցառումներ) կապված են վտանգների հետ: Կարևորում եմ ԴԶԾ-ում հնարավոր վտանգների նախապես բացահայտումը դպրոցի զարգացման գործընթացների պլանավորման ժամանակակից մոտեցումներում:

Առանց վտանգների հաշվառման ամենալավ մշակված ԴԶԾ-ն իրականացման փուլում կարող է հանդիպել խոչընդոտների:

ԴԶԾ-ի նպատակադրումների իրագործումը խոչընդոտող վտանգները բազմաբովանդակ են, և դրանց, ըստ ազդեցության ուղղությունների, կարելի խմբավորել հետևյալ կերպ.

Ռիսկեր	**Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողություններ**
Դպրոցի կառավարմանը մասնակցող մարմինների գործունեության հնարավոր բացասական ազդեցություններ,	Առաջնորդվել համապատասխան իրավական ակտերով
Դպրոցի վերահսկողությունն իրականացնող պետական մարմինների կողմից դպրոցի գործունեությանը հնարավոր բացասական միջամտություններ	Առաջնորդվել համապատասխան իրավական ակտերով

Դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակի խոչընդոտներ	Խրախուսել ուսուցիչների ձեռքբերումներն ու հաջողությունները: Ստեղծել պայմաններ՝ ավելի հաճելի և արդյունավետ դասեր պատրաստելու համար:
Դպրոցի ֆինանսական սահմանանափակ հնարավորություններ	Գտնել ֆինանսական աղբյուրներ
Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն	Գտնել ֆինանսական աղբյուրներ
Դպրոցի միջավայրի և ձևավորված մշակույթի խոչընդոտներ	Պահպանելով հինը՝ ներմուծել նորը՝ կոտրելով կարծրատիպերը:
Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն	Սեմինարների, քննարկումների, հանդիպումների կազմակերպում, որոնց արդյունքում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը կդառնա ավելի դյուրին:
Դպրոցի գործունեության վերաբերյալ համայնքում ձևավորված կարծրատիպեր	Մշտապես գովազդել, ներկայացնել դպրոցի ձեռքբերումները

11.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԴԶԾ-ի արդյունքների **գնահատումը իրականացվում է ցուցանիշների և չափանիշների** համեմատական ներկայացմամբ, ինչպես նաև համապատասխան հաշվետվությունների և այլ միջոցներով: Դրանք հասանելի են **դպրոցի շահառուներին** (պետական լիազորված մարմիններ, դպրոցի աշխատակազմ, սովորողների ծնողներ, սովորողներ, համայնք և այլն): ԴԶԾ-ում ընթացիկ աշխատանքների և արձանագրված արդյունքների վերաբերյալ անհրաժեշտություն է զգացվում պարբերաբար հրապարակել տեղեկատվություն դպրոցի հայտարարությունների համար առանձնացված տեղում, դպրոցի կայքում և իրազեկել ծնողներին՝ ժողովների և դպրոցական միջոցառումների ժամանակ, ինչպես նաև տեղադրել ԿԳ նախարարության պաշտոնական կայքում՝ azdarar.am:

Ցուցանիշների և չափանիշների հաշվարկման ժամանակ կիրառում ենք հետևյալ մեթոդները՝

- վիճակագրական տվյալների վերլուծություն.
- փաստաթղթային վերլուծություն.
- դիտարկում և փաստագրում.
- հարցումների իրականացում և արդյուքների վերլուծություն:

Որոշ ցուցանիշների և չափանիշների հաշվարկման համար կիրառում ենք նաև համակցված մեթոդներ:

Վիճակագրական տվյալների վերլուծությունը ենթադրում է՝

վիճակագրական տվյալների հավաք և համակարգված ներկայացում աղյուսակների և գրաֆիկների միջոցով, իսկ այնուհետև եզրահանգումների, կանխատեսումների կատարում և առաջարկությունների ներկայացում:

Փաստաթղթային վերլուծությունը ենթադրում է՝

հաստատության գործունեությունն ապահովող ներքին փաստաթղթերի, վիճակագրական տվյալների և հաշվետվությունների ուսումնասիրություն, արդյունքների արձանագրում, եզրահանգումների կատարում և առաջարկությունների ներկայացում:

Դիտարկումը կամ փաստագրումը ենթադրում է՝

ըստ սահմանված ցուցանիշների և չափանիշների՝ հաստատության մարդկային, նյութական, ֆինանսական ռեսուրսների առկայության (կամ դրանց բացակայության) ու դրանց վիճակի, ինչպես նաև ուսումնասիրվող գործընթացների արձանագրում կամ նկարագրում՝

աղյուսակների, դիտարկման քարտերի կամ գրառման այլ ձևերով: Դիտարկման միջոցով ստացվող տեղեկատվությունը բազմաբնույթ և օգտակար է ոչ միայն ինքնավերլուծության, այլ նաև հաստատության գործունեությունը լիարժեք ներկայացնելու համար:

Հարցումների անցկացումը ենթադրում է՝

հաստատության գործունեությունը նկարագրող որևէ ցուցանիշի կամ չափանիշի (դրանց խմբի) վերաբերյալ տարբեր շահառու խմբերի կարծիքի ուսումնասիրություն: Կախված ուսումնասիրվող ցուցանիշի և չափանիշի բնույթից և նպատակից հարցումներ ենք իրականացնում շահառուների շրջանում (վարչական աշխատողներ, ուսուցիչներ, հաստատության սպասարկող անձնակազմ, սովորողներ, ծնողներ) տարբեր մեթոդներով (հարցազրույցների անցկացում, հարցաթերթերի լրացում և այլն):

Հարցազրույցների անցկացման հիմնական նպատակն է՝ բացահայտել տարբեր շահառու խմբերի կարծիքը և ստանալ խորքային տեղեկատվություն խնդրո առարկայի կամ ուսումնասիրվող երևույթի վերաբերյալ՝ ի հայտ բերելով այնպիսի կողմեր, ինչպիսիք են շահառուների բավարարվածությունը, առկա հիմնախնդիրները, թերությունները և այլն:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական: Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Դրան մասնակցում են վարչական ու մանկավարժական աշխատողները, սովորողները ու ծնողները:

Դպրոցի զարգացման ծրագրի **վերահսկողությունը** իրականացնում է **դպրոցի խորհուրդը**:

Քանի է, որ ԴԶԾ-ն դպրոցի 5-ամյա հեռանկարային զարգացման ծրագիր է, և որքան էլ այնտեղ պլանավորված նպատակները, խնդիրները և գործողությունները ճշգրտորեն ներկայացված լինեն, ժամանակի ընթացքում, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, որոշակիորեն ենթարկվում են փոփոխությունների և սրբագրումների:

ԴԶԾ-ի վերահսկողության գործընթացում դպրոցի խորհուրդը իր խորհրդատվական աջակցությամբ դպրոցի ֆինանսական ռեսուրսների ճիշտ ուղղորդմամբ և այլ աշխատանքներով աջակցում է տնօրենին ԴԶԾ-ի իրականացման փուլերում:

ԴԶԾ-ի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա այդ ծրագրի հիման վրա կազմված **դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են**: Դրա համար ԴԶԾ-ի նպատակադրումները ամբողջությամբ

արտացոլված են դպրոցի տարեկան աշխատանքային պլաններում՝ ԴԶԾ-ով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

ԴԶԾ-ի վերհսկողության արդյունավետ միջոցառումներ են.

1) Դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված ԴԶԾ դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը,

2) Դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը,

3) Համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ ԴԶԾ-ի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը:

4) Դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրենության կողմից ԴԶԾ-ի արդյունքների գնահատմանը և այլն:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

No	Միջոցա-ռում/ գործողու-թյուն	Ակնկալվող արդյունք	Սահման-ված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրու-թյուն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացում-ներ կատա-րելու մա-սին առա-ջարկու-թյուններ	Նշումներ

11.ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Տնտեսության մեջ

- կրթության իրականացում բարեկեցիկ, ընդարձակ՝ վերանորոգված, ամբողջովին կահավորված երկու մասնաշենքերում
- գրադարանը, ՏՀՏ կենտրոնը, բուֆետ-ճաշարանը, մանկավարժահոգեբանական կենտրոնը, մարզադահլիճը լինեն տեխնիկապես վերազինված և անհրաժեշտության դեպքում ծառայեն նաև համայնքին,
- քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներում, պատմության, կենսաբանության, աշխարհագրության, մաթեմատիկայի կաբինետներում լինեն անհրաժեշտ սարքավորումներ և միջոցներ:

Մանկավարժական համակազմում

- դպրոցի նորովի ղեկավարում և կառավարում, համագործակցային, բարեփոխումներին հետամուտ թիմային աշխատանքով,
- առաջիկա 5 տարիներին բոլոր ուսուցիչներն կամավոր ատեստավորմանը մասնակցած և անցողիկ շեմը հազթահարած լինեն,
- մեթոդական աշխատանքների հիմնական ուղղությունների և բովանդակության նորովի համակարգում,
- մանկավարժների մեթոդական մշակումների ապահովում,
- մանկավարժական հետազոտական գործունեության թեմատիկայի և բովանդակության համակարգում,
- ուսուցիչների կողմից դասապրոցեսին համակարգիչների օգտագործում,

Աշակերտների համակազմում

- դպրոցի աշակերտների առաջադիմության և որակի զգալի բարձրացում.
- քաղաքային և հանրապետական առարկայական օլիմպիադաներում աշակերտների մասնակցության թվի աճ,

- հանրապետական նշանակության տարբեր մրցույթներին ակտիվ մասնակցություն և մրցանակային տեղերի ապահովում,
- հետազոտական աշխատանքներում սովորողների մասնակցություն և աշխատանքների հրապարակում,
- դպրոցի աշակերտների շրջանում ներառական կրթության ավելի լայն ընդգրկում

Դաստիարակության և արժեքային համակարգում

- դպրոց–ծնողներ-համայնք համագործակցության առավել ակտիվացում՝ համապատասխան գործողությունների ծրագրի կազմումով,
- ծնողական և աշակերտական խորհուրդների համատեղ գործողությունների ծրագրով աշխատանք,
- աշակերտական խորհրդի լիազորությունների ընդլայնում՝ աշակերտական ինքնավարության պատասխանատվության մեծացում,
- համայնքի համար դառնալ կրթական հարցերով տեղեկատվական կենտրոն, խորհրդատվական ծառայությունների ապահովում մանկավարժահոգեբանական կենտրոնում և գրադարանում,
- Դպրոցի տեղեկատվական կենտրոնը տեղեկատվության ապահովումից բացի կդառնա հետազոտական կենտրոն՝ բոլոր շահառու կողմերի համար,
- օրենքի շրջանակներում դպրոցում իրականացվող ձեռնարկատիրական գործունեության շնորհիվ լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրների ապահովում,
- մրցույթով շահած կրթական լրացուցիչ ծրագրերի կատարում և մանկավարժներին լրացուցիչ աշխատավարձով ապահովում,
- դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման նորագույն մոտեցումների կիրառում:
- կարգախոսային հայրենասիրությունից անցում գործնական հայրենասիրական դաստիարակության:

<u>Զարգացման ծրագիրը գործի դնելուց հետո լիահույս ենք և վստահ, որ ծրագիրը կնպաստի դպրոցի վարկանշային ցուցանիշի</u>

աճին, կրթության նոր , բարձր և ցանկալի մակարդակի հաղթահարմանը և կրթական համակարգի զարգացմանը։